

ԱՅՅԱԿԱՆ ՀՈԼՈՎՔ

ԱՃԻՄԵՐՀԱԲԱՐԻ ՄԷՋ

ապութիւն «Նոր Դպրոց» ամսագրից.

(1908, սպրիլ իւ 1909, դեկտեմբեր)

ԱՅ. ՄԱԼԻՉՈՒԵՆՑ



Թ Բ Ֆ Լ Բ Ո

Հայոց ազգական թիվ ՀՀ համարվուհի 18:

1910

+91.99.5

• Մ. 16

ԴԱՐՁԵՑ ՀԱՅՅԱԿԻՆ ՀՈԼՈՎԸ *

Իմ յօդւածին, որ զետեղիլ էի «Նոր-Դպրոցի» անցեալ տարշավ ապրիլի համարում և որի մէջ, հակասակ պ. Մ. Արեգեանի կարծիքին, պաշտպանել էի առանձին հայցական հոլով դնելու կարեորութիւնը մեր աշխարհաբարի սուուղարանութեան մէջ՝ պ. Արեգեանը պատասխանել է մի ամբողջ գրքոյկով («Հայցական հոլովը մեր աշխարհաբարում», Վաղարշապատ, 1909, 80 մեծագիր էրես), որի մէջ աշխատել է հերքել բոլոր իմ փաստերն ու խորհրդածութիւնները յօդւած հայցականի պահպանութեան և նորանոր փաստերով և վկայութիւններով նորից առացուցանել այն սկզբանքները, որ արծարծել էր «Արարատում» զետեղած իւր յօդւածում ի նպաստ իւր նորամուծութեան:

Շատ անյարմար զրութեան մէջ զրեց ինձ պ. Արեգեանը իւր այս ընդունակութեան-բրոշւրով. Էսել նրա վերաբերմամբ՝ կնշանակել անուղղակի կերպով ընդունել նրա ասածները ոչ միայն բայն հարցի, այլ և կողմնակի կերպով նրա հետ շաղկապւած իմ անձի վերաբերմամբ—որ ևս չէ կարող անել: Իսկ պատասխանել—ի՞նչպէս: Եթէ իմ 8 երեսանոց յօդւածին պատասխանելու համար պ. Արեգեանը կարիք զգաց 80 երեսանոց մի բրոշիւր զրելու, ևս էլ այս բրոշիւրին կէտ առ կէտ պատասխաներու համար մի ահազին զիրք պէտք է զրէի: որովհետեւ այդ կարիքն ևս էլ ևմ զգում: Բայց կատարել այսպիսի զործ անհնոր է ինձ,—ոչ այդքան ազատ ժամանակ ունիմ և ոչ տողազրելու տեղ, և ոչ էլ միջոց տառանձին զրբով հրաս արակելու:

*) Ներկայ յօդւածո պատրաստած էր «Նոր Դպրոցի» մայիսի համարում զետեղելու համար, բայց ապրիլի 22-ի զիշերը ի միջի այլոց և այս յօդւածը իմ արամագրութեան տակից հանւեց և միայն հռկահմբերի 12-ին գարձեալ ինձ յանձնեց:—Հարկաւոր եմ համարում և այս յայտնել, որ ուղղագրութեան այն ձեզ («Հ» փոխանակ «ու»-ի), որը ժամանակաւորապէս ընդունել է «Նոր Դպրոցը» և որով ապագրում է յօդւածո՝ համապատասխան չէ իմ յօդւածի ձեռագրի ուղղագրութեան: Ես առիթ կունենամ առանձին յօդւած նորելու «Հ»-ով զըռութեան ձերն:

Ստ. Մ.



18193-8

Ես այս պատճառով ստիպւած եմ մի միջին ձանալարհ ընտրելու. — ես համառօտ կպատասխանեմ պ. Արեգեանի այն կէտերին, որտեղ կասկած է ձգւում եմ կօրբէկտութեան վրայ և առաջ, զարձեալ համառօտ կերպով կանգրադառնամ՝ բուն նիւթին, նուրից լուսարշնելով իմ տեսակէտը, պ. Արեգեանի մատակարարած նիւթերն էլ ի նկատ առնելով, և կդնեմ իմ վերջնական եղբակացութիւնս այս հարցի ասիթով։ Ես, ստիպւած, զանց կանեմ պատասխանելու այն բազմաթիւ բանասիրական կողմնակի հարցերին, որ շշափում է պ. Արեգեանը՝ բուն հարցը լուսարանելիս և իմ տեսակէտները հերքելու համար։ Իմ պատասխանու ուրեմն չի լինի սիստեմական և լիակատար—բայց ուրիշ հնար չկայ։

Պ. Արեգեանը հէնց բրօշիւրի առաջին նախադասութեան մէջ անսարքար մեղադրանք է ուղղում ինձ զէմ, առելով, «Արարատում գետեղած իմ «Աշխարհաբարի հոլովները» վերնագրով յօդւածը դեռ չվերջացած, պ. Առ. Մալիսասեանը շտապիլ է իր կարծիքը յայտնել» (եր. 3): Ես «չվերջացած յօդւածի» մասին կարծիք չեմ յայտնել ինչպէս զրում է պ. Արեգեանը, այլ միայն «հայցական հոլովի» մասին, որ վերջացած էր Արարատի յունվարի համարում, ստորագրւած, առանց «շարտանակելի» նշանակելու։ Այդ «հայցական հոլովը» ինքն ըստ ինքեան մի ամրողութիւն է և կարող է քննութեան առարկայ լինել, անկախ այն հարցից, թէ ինչ կասէ պ. Արեգեանը սեռականի կամ այլ հոլովների մասին։ Բայցի սրանից՝ ես իմ յօդւածը չեմ զրել ինքնարեարար, չեմ «շտապիլ զրելու» (ինչպէս չեմ զրել նրա աշխարհաբարի քերականութեան յարւցած բազմահասկ կարենոր հարցերի, սեռականի և այլն մասին), այլ զրել եմ մի քանի ուսուցիչ բնկերներիս յորդուանքով ու պահարկութեամբ։

Պ. Արեգեանը ինձ մեղադրում է, որ ես իր եղբակացութիւնը ոչնչացնելու համար զիմել եմ «ոչ ուզիլ ձանալարհի»— նրան «վերագրել եմ մի սիստ բան», որը նա չէ առել, և «առացոյց առել զրա սիսալ լինելը» (եր. 4, 5): Ես իրը թէ պ. Արեգեանին վերագրել եմ մի անհեթեթութիւն— իրը թէ նա առած լինէր, թէ «հոլովը լոկ բառի ձե է, առանց որևէ ձեական նշանակութեան», և ապա հերքել եմ այդ անհեթեթութիւնը (եր. 4):

Ես սակայն այդպիսի բան չեմ արել։ Ինքը պ. Արեգեանը էլ զիտէ (եր. 6—7), որ ես չակերտներով բառացի մէջ եմ բերել նրա երկու սահմանութեան հոլովի, նրա աշխարհաբարի քերականութիւնից և յօդւածից, և այդ երկու ցիտատներից էլ երեսմ է, որ պ. Արեգեանը հոլովի տակ հասկանում է նաև հոլովի նշանակութիւնը, փունկցիան։ Առատի և չէի կարող առել թէ «պ. Արե-

ՀԱՅՑԱԾԵՆ ՀՈԼՈՎԸ ԱՇԽԱՐՀԱԲԵՐԻ ՄԷՋ

Մանուկ Արեգեանը իւր աշխարհաբարի քերականութիւններից դուրս է ձգել հայցական հոլովը, և «Արարատ» ամսագրի Յունարի համարում ընդարձակ յօդւածի մէջ պատճառարանում է իւր արած նորամուծութիւնը։

Ինչպէս երեսմ է յօդւածից՝ պ. Արեգեանի հիմնական ելաւկանը որանք են։

1) Հայցական հոլովը աշխարհաբարի մէջ յատուկ ձեւ չունի, նա նման է կամ ուղղականին կամ արականին։

2) Հոլովը՝ բառի ձեն է, քանի ձեռվ որ մի լեզի մէջ բար փոփոխում է՝ այնքան էլ հոլով ունի այդ լեզուն։

Այս հիմնական ելակետներից եղբակացութիւնը պարզ է. աշխարհաբարը առնի հայցական հոլովի իրեն ձեւ, ուստի ստուգաբանութեան մէջ, որ պարի յուսումն է պէտք է դուրս ձգի այդ հոլովը, իսկ համաձայնութեան մէջ աւանդւի, թէ աշխարհաբարի ուղղական ու արականը զոր են ածւում նաև ուրիշ լեզուների և մեր զբարարի հայցական հոլովի իմաստն արտայատելու համար։

Պ. Արեգեանի այս հիմնական ելակետներից առաջինը ոչ ոքի համար նորութիւն չէ, թէպէտ կան զրական լեզի մէջ բաւական թւով գարձաւծքներ, որոնց մէջ պատահում են հայցական հոլովներ, յատուկ հայցականացուցիչ տարրերով, ինչպէս «զօր գիշեր», «բաղնիս զնալ», «աւեախս տալ», «ծառս լինել», «փոխս ընկնել», «փարս տալ» ևայլն, բայց այս զարձաւծքները կարելի է անմտած և մասամբ՝ իրեն քարացած ձեն, որոնց մէջ հայցականացիր տարրերը այլ ես չեն զբացւում իրեն կիսզանի օրգանական տարրեր։ Այս պատճառով հշատութեամբ կարելի է համաձայնել և ընդունել թէ արեկելահայց զրական լեզուն չունի յատուկ ձեւ հայցականի համար։

Բայց նորութիւն, և իմ կարծիքով՝ անընդունելի նորութիւն է պ. Արեգեանի երկրորդ հիմնական ելակետը. Հոլովը՝ լոկ բառի մէջ, որի փոփոխութեան օրէնքներն աւանդւելու են ստուգա-

ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎՔԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՄԵՋ

45

բանութեան մէջ, իսկ նշանակութիւնն ու ֆունկցիաները՝ համաձայնութեան մէջ։ Հոլովք բառի այն փոփոխւած ձեն է, որի հետ անբաժանելի կերպով կապւած է յատուկ նշանակութիւն՝ ֆունկցիա. եթէ հոլովից անջատենք հոլովիչ տարրի արդիւնաւորած ֆունկցիան՝ հոլով այլ ևս չի մնայ: Երբ մենք ասում ենք «ջրից»՝ այս բառը դադարում է այլ ևս պարզ «ջուր» նշանակելուց. «ջուր»-ը այստեղ հանդիսանում է իրքի մի աղբիւր, որտեղից մի բան վերցում է. նոյնպէս երբ ասում ենք «բաժակում»՝ այս բառաձեի մէջ «բաժակ»-ը սոսկ բաժակ չէ, այլ մենք նրան երեակայում, հաօկանում ենք իրքի մի տեղ, որի մէջ մի բան է պարունակում: Եւ անհնար է «ջրից» «բաժակում» բառաձեիրից բաժանել «աղրիւր», «աեղ» ֆունկցիաները, որ այս բառերն ասացիլ են հոլովիկի շնորհիւ: Այս բառաձեիրի մէջ մենք աւելի զգում ենք «ինչ-որ տեղից», «ինչ-որ տեղում» ֆունկցիաները, քան ջուր և բաժակ առարկաները. այսինքն հոլովի մէջ զերակշռում է հոլովի քան թէ բառի նշանակութիւնը: Եւ որչափ էլ ստուգարանութեան ուսուցիչը, մանկավարժական սկզբունքներին դէմ մեղանչելով, չկամինայ բացատրել հոլովիկի էական ֆունկցիաները՝ աշտկերտըն այսու ամենայնիւ կըմբռնէ այդ ֆունկցիաները:

Եթէ հոլովիկի լոկ բառի ձեւը նշանակէին, առանց նրանց հետ անբաժանելի կերպով միացած ֆունկցիաների՝ այս գէպրում գոյսութիւն չէր ունենայ ուղղական կամ անսանական կոչւած հոլովը. որովհետև այս հոլովով զրւած բառը՝ բառի ձեւ չէ, այլ հէնց նոյն ինքն բառն է՝ չփոփոխւած, սկզբնական ձեռվի: Եւ եթէ բուրուր լեզուների քերականութիւններն ունին անսանական հոլով և այս հոլովով կոչում են բառի սկզբնական ձեւ՝ սա նշան է, որ հէնց այդ սկզբնական ձեւի ֆունկցիան ունին աչքի առաջ և ոչ ձեւի փոփոխութիւնը, որ գոյսութիւն չունի նրա մէջ։ Մեր քերականութիւնների մէջ անյաջող կերպով սովորութիւն է զարձել ասել «ուղղական» հոլով, փոխական «անսանական» ասելու, ինչպէս ուղիղ գործ է ածել Հ. Աւետիքեանը:

Այսպէս էլ միւս հոլովներին տրւած են անուններ՝ համապատասխան իւրաքանչիւրի էական ֆունկցիային, սեռական՝ երբ բառաձեւ սերողի ֆունկցիա է ստանում (հօր որդի). գործիւնական՝ երբ բառը գործիւրի ֆունկցիա է ստանում (ջրով). սերգոյական՝ 1), երբ բառը տեղի ֆունկցիա է ստանում (ջրում): Եթէ բառա-

1) Եւ ոչ ներքոյական, ինչպէս շարունակ զործ է ածում պ. Արեգեանը իւր Քերականութեան մէջ, սիստ ստուգարանելով այս բառը՝ իրք ներքոյ—ական, (տակը եղող), այնինչ ուղիղ ստուց դաբանութիւնն է—ներգոյ—ական (մէջը եղող):

ձեփ հետ անբաժան կապւած չլինէր նրա ֆունկցիան՝ այս բնորոշող անունները չէին լինի, այլ անտարբեր կոչումներ—առաջին, երկրորդ և այլն հոլով, և պ. Արեգեանն էլ հետևողաբար վարելով՝ է հոլովիկի տնուններ դնէր—«ուղղական ձեփ», «թերւած էրկրորդ», «թերւած երկրորդ» և այլն:

Եթէ հոլովիկի լոկ բառի ձեւը նշանակէին՝ այդ գէպրում մեր գրական լիգի մէջ ոչ թէ կլինէին 5 հոլով, ինչպէս ընդուռում է պ. Արեգեանը (սողական, արական, բացառական, գործիւնական, ներքոյական), և ոչ թէ 7 հոլով, ինչպէս ընդուռում են միւս բոլոր քերականութիւնները, (սեռական ու հայցականն էլ վերսիշեալ հնիվ հետ), այլ տապարսան և աւելի հոլովիկի. օր. երեխէր, երեխայը, երեխանէր, երեխայոց, երեխէքանց, երեխանց, երեխանների, երեխերանց, երեխաններից, երեխերանցից, երեխաններով, երեխէքով, երեխերանցով, երեխէքանցով. երեխաններում, երեխանցում, երեխերանցում, երեխէքանցում, այսքան էլ՝ նոյն բառաձեւի որոշւած ձեւը, որոնք նոր փոփոխութիւններ են նոյն ուղղական հոլովի, ուրեմն և նոր հոլովիկի: Այսպէս նաև մարդոց, մարդկանց, մարդերի, մարդկերանց. տարու, տարւայ, տարւան և այլն իրանց միւս բազմաթեալ հոլովիկով: Եւ եթէ պ. Արեգեանն այս ձեւի համար մէկին մի տանձին անուն չէ զնում, ամեն մինը մի տանձին հոլով չանաչում, այլ մի քանիւը խմբում է մի հոլովի տակ (քեր. §§ 333, 1, 2, 3, 4, 324, և այլն), նշանակում է, որ հէնց ինքն էլ հոլովական ձեւը մէջ կարենարութիւնը տալիս է ոչ թէ բառի արտաքին ձեւը, այլ նրանց տակ թաքնուած ֆունկցիաներին:

Պ. Արեգեանը «հոլով» բառի բացատրութիւնը տարբեր կերպով է տալիս իւր Աշխարհաբարի Քերականութեան և «Արարտուում» գետեղած յօղւածի մէջ: Առաջինուում «Հոլով» ասուում են գոյականի այն ծննելը, որոնք ցոյց են տալիս, թէ զոյականը խօսրի մէջ ինչպէս լրացում է զատնում մի ուրիշ բառի, կամ իրք խնդիր ինչպիսի կախում ունի իւր խնդրառու բառից. Հոլովիկի կազմում են վերջաւորութիւններով, օրինակ՝ բայլոր, քաղաքի» և այլն: Երկրորդում «ինչ» է հոլով տասծը—եթէ ոչ հոլովի բառերի զանազան ձեւները, որ կազմում են մինչ մասամբ հոլովական վերջաւորութիւններով:

Նախ՝ մի-երկու նախընթաց նկատողութիւն. 1) Առաջին բացատրութեան մէջ անորոշ և գմւարըմբռնելի են աշակերտի համար «ինչպիսի լրացում է գառնում... իրք խնդիր ինչպիսի կախում ունի» և այլն խօսքերը: 2) Եթէ «հոլովիկը կազմուում են

վերջաւորութիւններով՝ ապա ուրեմն «քաղաք» հոլով չէ. որովհետև վերջաւորութեամբ չէ կազմւած, ուրեմն և հակասութիւն կայ քերականութեան բացարութեան մէջ:

Այս անցողակի նկատողութիւններից յետոյ, դառնալով բուն էութեան՝ տեսնում ենք շատ մեծ զանազանութիւն այս երկու բացարութիւնների մէջ: Առաջնում՝ հոլովը ընորոշւած է իբրև փունկցիա արտայայտող ձև, իբրև մի ձև, որի հետ անխպելի կերպով կապւած է նրա Փունկցիսն, իսկ երկրորդում՝ հոլովը լոկ ձև է՝ (մեծ մասամբ) հոլովական վերջաւորութիւններով կազմւած: Ի հարկէ, երկրորդ դէպքում էլ պ. Արեղեանը, վերջակէտից յետոյ, բացատրում է, որ «այդ ձևերը ցոյց են տալիս զանազան կախման յարաբերութիւններ» և այլն, բայց սրանով էութիւնը չէ փոխում: Երկրորդ բացատրութեան մէջ պ. Արեղեանը, անշուշտ դիտաւորութեամբ, բաժանումէ հոլովական ձևից նրա Փունկցիան, որպէս զի յետոյ, այս բաժանման վրայ հիմնւելով, եզրակացնէ, թէ առուգարանութեան գործն է աւանդել ձերի դիտութիւնը, իսկ Փունկցիայի դիտութիւնը պէտք է աւանդել սինտակսիսի (համաձայնութեան): մէջ: Տարակոյս չկայ, որ վերոյիշեալ երկու բացարութիւններից ուզիղն է՝ առաջինը, քերականութեան մէջ եղածը, ինչպէս վերը բացարեցինք: Բայց այս դէպքում, հետեղական լինելով՝ անշուշտ պ. Արեղեանը պէտք է ընդունէր և հայցական հոլով. որովհետև հայցական հոլովը, սրան էլ ծերով նման լինի ուղղականին կամ տրականին՝ բայց ունի բոլորովին տարբեր փունկցիա, և ոչ միայն բոլորովին տարբեր, այլ ուղղակի հակաղիք փունկցիա: Օրինակի համար.

«Մի որսորդ սպանեց մի աղւէս».

«Երեխան զնաց պարտէզը».

Այստեղ «որսորդ», «երեխայ» մկնողի եւ ներզործողի Փունկցիաներ ունին, իսկ «աղւէս» և «պարտէզը» յանզման եւ կրողի Փունկցիաներ, ինչպէս արտայայտած է սլաքի ուղղութեամբ:

«Հաւը խեղդեց ուրուրը».

«Կնիկը շունը տարաւ».

Այստեղ բառերի զասաւորութիւնը փոխւեց, ուրեմն և սլաքի ուղղութիւնը. բայց վերինի պէս՝ «ուրուրը» և «շունը» մկնողի եւ ներզործողի Փունկցիաներ ունին, իսկ «հաւը» և «կնիկը» յանզման եւ կրողի:

«Բեղ կտամ մի գիրք».

«Բեղ կտամ քո սիրած տղին».

Առաջին օրինակում «քեզ»-ը ստացող է, երկրորդ օրինակում ստացած, երկու դէպքումն էլ կրողի գերում:

Վերականութիւնը լեզվի երևյթների գիտակցական ուսումնականութեանը է. ուսախի հէնց քերականութեան մէջ՝ աններեկի մինչույն հոլովով կոչել իրար հակասող Փունկցիաները, ինչպէս են սկսողի և յանզման, ներգործողի և կրողի, ստացողի և ստացւածի Փունկցիաները: Եթէ «մի որսորդ սպանեց մի աղւէս», «կրիկը շունը տարաւ» խօսքերում, որսորդ, աղւէս, կնիկը, շունը, ըստ պ. Արեղեանի, կոչենք ուղղական հոլով, իսկ «քեղ կտամ մի գիրք», «քեղ կտամ քո սիրած տղին» խօսքերում «քեզ»-ը կոչենք տրական հոլով, ինչ կշահինք, — այն նշանաւոր գիտակցութիւնը, թէ «որսորդ և աղւէս», «կնիկը և շունը» ձևով իրար նման են, «քեզ=քեզ», այսինքն մի բան, որ առանց քերականութեան և առանց ուսուցչի էլ երեխան զիակ, և գիտէ շնորհիւ այն բանի՝ որ քերականութիւն չգիտէ: Բայց ինչ կլուցնենք՝ կլուցնենք այն բոլորը՝ ինչ որ քերականութիւնը պէտք է տայց գիտակցութիւնը այդ բառերի տարրեր Փունկցիաների, նրանց տարրեր զերերի ճանաչողութիւնը:

Վերցնենք ուրիշ օրինակ.

«Մի որսորդ տեսաւ մի աղւէս».

«Որսորդը տեսաւ աղւէսինք».

Բայ պ. Արեղեանի քերականութեան՝ առաջին օրինակում «որսորդ և աղւէս» ուղղական են. իսկ երկրորդ օրինակում, որ նշանակութեամբ ոչնչով չէ զանազանուում առաջինից, այլ միայն գոյականները զրւած են որոշած ձևերով՝ «որսորդը» դարձեալ ուղղական է, իսկ «աղւէսին» արդէն տրական: Մտնենք աշակերտի հոգեկան գրութեան մէջ. այդ ինչ տարօրինակ ուղղական է, որ երբեմն, որոշած լինի թէ անորոշ միշտ միենույն ձևն ունի («որսորդ», «որսորդը»), իսկ երբեմն անորոշ ձևում՝ դարձեալ ուղղական է մնում («աղւէս»), իսկ որոշած ձևում փոխուում է տրականի («աղւէսին»): Երեխան, շնորհիւ պ. Արեղեանի նորամուծութեան, ոչ միայն չի ստանայ Փունկցիաների գիտակցութիւն, այլ և խառնաշփոթութեան մէջ կընկնի. քերականութիւնը ոչ թէ կծառայէ նրան պարզելու լեզվի երևյթները, այլ խառնելու, խճճելու: Բայց զարմանալի է և այն հակասութիւնը, որի մէջ անդիտակցաբար լնկնում է պ. Արեղեանը: Վերի օրինակում նա «աղւէս» ձևը կոչում է ուղղական այս «բառի բուն իմաստով»: Եթէ նա ուղղական բառը հասկանում է տառացի, ստուգարանական

նշանակութեամբ՝ նա, հետեղական լինելու համար նոյնովիսի բուռն ստուգաբանական իմաստով պէտք է հասկանար և «արական» բառը (տալու հոլով), և այս դէպօռութիրի օրինակում բերւած «աղէսին» ձեզ չպիտի կոչէր տրական, որովհետեւ «որսորդը տեսաւ աղէսին» խօսքում «աղէսին» ոչինչ չէ արտում, ուրեմն և նա տրական չպիտի լինի՝ այս բառի բուռն իմաստով:

Վերցնենք մի երրորդ օրինակ:

«Նա սիրում էր իւր տունը և իւր երեխաներին»:

Բայ պ. Արեղեանի քերականութեան՝ «տունը» ուղղական է, «երեխաներին» տրական, երկուսն էլ խնդիր Աշակերտը անշուշտ շւարած պիտի մնայ, տեսնելով, որ միենոյն նշանակութիւնն արտայատելու համար տարրեր հոլովներ են գործ ածւում լիզի մէջ, և որ ուղղական ու տրական խնդիրները միենոյն գերն են կատարում: Բայց մի ուրիշ խօսքի մէջ, — «Նա սունը կտակց իւր երեխաներին»—տեսնում է, որ «երեխաներին» տրական խնդիրը արդէն ուրիշ զեր է կատարում: Եւ աշակերտին շարժունքից չէ կարող հանել հայերէնի ուսուցիչը, որ զեկալարւելով այլ սուսերէնի ուսուցիչը:

Մեր դպրոցներում բացի մայրենի լիզից աշակերտաները սովորում են և սուսերէն, որի մէջ պ. Արեղեանը ընդունում է հայցականի գոյութիւնը՝ շնորհիւ ա, յ վերջացած գոյականների և ածականների իգականների յատուկ վերջաւորութեան: Կողմանակի նկատենք նախ, որ պ. Արեղեանի յիշած պատճառով չէ, որ պէտք է ընդունել հայցական հոլովի գոյութիւնը՝ սուսերէնում: Հայցական հոլով սուսերէնում կայ, որովհետեւ այդ հոլովի ֆունկցիան գոյութիւն ունի լիզի մէջ: իսկ այդ ֆունկցիան արտայայտով հոլովն երբեմն ունենում է ուղղականի, երբեմն սեռականի և երբեմն զրում է առանձին՝ յ, յօ վերջաւորութեամբ: «Я привожу отца, мать и старшую сестру նախադասութեան մէջ սուսերը չեն ասում թէ ունա սեռական է, мать ուղղական է և սուսերը չեն ասում թէ ունա սեռական է, мать սեռական է և մայ կոչում են հայցական, յայլ երեքն էլ ասում են հայցական, որովհետեւ երեքն էլ միենոյն ֆունկցիան ունին այդ խօսքի մէջ: և ունա և մայ կոչում են հայցական ոչ այն պատճառով որ սուսերէնի մէջ գոյութիւն ունի (ինչպէս սուսերը ստուգու սուսերը չայցականի վերջաւորութիւն: նրանք ունա և մայ ձեւեր կոչէին հայցական այդ սախադասութեան մէջ եթէ չինէր էլ սուսերը խօսքը և եթէ այդ յ, յօ վերջաւորութիւնն առասարակ չինէր սուսերէնի մէջ:

Այսպէս թէ այնպէս՝ սուսերէնը ունի հայցական հոլով, և

հայ աշակերտը փոխանակ իւր մայրենի լիզի միջոցով քերականութեան հիմնական դադախարներն ստանալու և ապա օտար լիզի քերականութիւնը նրա միջոցով ըմբռնելու, ինչպէս ծրագրւած է Դպրոցական նախագծով, ինչպէս և մանկավարժութեան պահանջն է պէտք է առաջին անգամ սուսերէնի միջոցով դադախար ստանայ հայցական հոլովի մասին, և տարակոյններից ու հարցուփորձերից յետոյ իմանայ, թէ հայերէն ևս կայ հայցական հոլով, որ ինչպէս սուսերէնում «օնի լիօնիտ շաբաթը և շաբաթի մէջ՝ «ՃԵՏԵЙ» հայցական են՝ այնպէս էլ հայերէն «Նա սիրում է իւր տունը և իւր երեխաներին» խօսքի մէջ՝ «տունը» և «երեխաներին» հայցական են, և ոչ թէ սուածինն ուղղական (ինդիր) և երկորորդը արական (ինդիր):

Ո՞րքան ցանկալի է, որ աշակերտը սխալ ըմբռնողութեան մէջ մնայ քերականական մի կարևոր ֆունկցիայի վերաբերմաք և միայն ստար լիզի միջնորդութեամբ ճիշտ դադախար ստանայ այդ ֆունկցիայի մասին և իւր սխալն ուզգէ:

Արդ՝ երբ աշակերտը վաղ թէ ուշ, կամ աշխարհաբարի համաձայնութեան մէջ կամ զբարար սովորելիս, կամ սուսերէնի միջոցով պէտք է ճանաչէ հայցական հոլովի գոյութիւնն ու ֆունկցիան և պէտք է հասկանայ, որ այդ ֆունկցիան գոյութիւն ունի և աշխարհաբարի մէջ էլ ինչ կարիք կայ հէնց ստուգաբանութեան մէջ այդ հոլովը չգնել թէ նրա ձեզ (թէ նման է կամ ուղղականի կամ տրականի) և թէ ֆունկցիան (թէ նշանակում է յանգման և շարժողութեան նպատակակէտ): Եթէ «ուղղական» բառի տառացի, ստուգաբանական նշանակութիւնն է պ. Արեղեանին գայթակղեցնողը՝ լաւ է հէնց այդ գայթակղենողը բառը վերցնել մէջ տեղից և ուղղականը կոչէլ անւանական (nominativus—սմենիթանական): և հայցականին իրան պատկանող տեղը տալ հոլովների շարքում: Եթէ աշակերտաներին շփոթութիւն պէտք է պատճառէ այն հանգամանքը, որ միենոյն ձերն երկու անուն ենք տալիս—(ուղղական և հայցական «այգի»), այդ շփոթութիւնը հեշտութեամբ կարելի է փարատել՝ երկու հոլովների տարրեր նշանակութիւնը բացատրելով: Պ. Արեղեանը անշուշտ չէ կամենում, որ աշակերտը հոլովական ձեւերը թութակի պէտ սովորի տաել առանց նրանց նշանակութիւնները հասկանալու: Եթէ այսպէս է՝ ուրեմն և «այգի» բառի մէջ ուղղականի և հայցականի նշանակութիւնը նրան կացատրելի, և շփոթութեան տեղիք այլ ևս մնայ: Եթէ, օրինակի համար, սուսերէնը աշակերտին բացարձէ «այգին հասցրեց» նախադասութեան երեք նշանակութիւնները, այգի բառի երեք առումների շնորհիւ (իբրև ենթակայ,

սեռի խնդիր և տեղական խնդիր) և ցոյց տայ ահազին տարբերութիւնը ուղղականի ու հայցականի մէջ աշակերտը էլ բնաւ չի շփոթի այդ երկու հոլովները և դեռ մի քանի բան էլ աւելի կսովորի և մասնաւանդ՝ քերականական թանկաղին գիտակցութիւն ձեռք կը երէ հոլովների գունկցիաների մասին:

Պ. Արեղեանի յօդւածում ամենից ծանրակշիռ փաստը յօդւածում իւր նորամուծութեան այն է, որ յունարէնը (ինչպէս և ոսւսերէնը) չունի յատուկ ձեւ բացառականի համար, իսկ այս հուրվի արտայայտող ֆունկցիան յունարէնում կատարում է սեռական հոլովը. այս պատճառով էլ յունարէնի քերականութիւնները չունին բացառական հոլով: Բայց այս երեսով չէ արդարացնում հայցականի վերացումը մեր աշխարհարարի քերականութիւններից. նախ որովհետեւ հայցականի հոլովը, ինչպէս վերը բացարեցինք, հակադիր, հակասական ֆունկցիա ունի ուղղականի (=անսանականի) նկատմամբ, և այս երկու հոլովները կազմում են զործողութեան երկու հակառակ ծայրերը, ուստի անշուշտ, հէնց քերականական ուսման սկզբում, պէտք է մատնանիշ անել այս երեսովի վրայ՝ բազմաթիւ խառնաշփոթութիւններից խոյս տալու համար. և երկրորդ՝ որ հայցականը թէպէտաշխարհարարում չունի սերիական ձեւ, բայց ունի յատուկ կիրառութեան ձեւ, որով զանազանում է թէ ուղղականից և թէ արականից. այսպէս

մասուն	մարդ	մարդ	մարդը
մարդու	մարդու	մարդուն	մարդուն.

այսինքն՝ հայցականը ձեռք ոչ ուղղական է և ոչ տրական, այլ առանձին տեսակ խառնուրդ երկու ձեերի, ուստի և հէնց այս առանձնայատկութեան շնորհիւ պէտք է առանձնապէս յիշել քերականութեան մէջ:

Մեր եզրակացութիւնն է: Ո՞չ ձեականօրէն և ոչ տեսականօրէն չէ արդարանում հայցական հոլովի վերացումն աշխարհարարի ստուգարանութեան զասազրքից, իսկ զործնականօրէն ու մանկավաժական տեսակէտից շատ մեծ վնասներ կպատճառէ այդպիսի վերացումը: Եթէ հասուն, քերականական գիտակցութիւն ունեցողի համար կարելի է դուրս գտել քերականութիւնից հայցական հոլովը, երբ նա յատուկ ձեւ չունի՝ տարբական քերական ուութեան մէջ, որտեղ աշակերտը առաջին անդամ զաղափար պիտի կազմէ հոլովների ու նրանց ֆունկցիաների մասին՝ հայցականի գտարումը միայն վնաս կպատճառէ:

ՍՏ. ՄԱԼԻԱՍԵԱՆՑ

12

ԴԱՐՁԵԱԼ ՀԱՅՅԱԿԱՆ ՀՈԼՈՎԸ *

Ես ուշագրութեամբ երկու անգամ կարդացի պ. Արեղեանի բրոշները, որի մէջ, որչափ հնարաւոր է, աշխատել է փաստաբանել իր տեսակէտը՝ «ձեական, պատմական, տեսական, զործնական և մանկավաժական» հայեցակէտներով, մէջ քերելով, բացի սեփական դատողութիւններից՝ նաև հեղինակաւոր լեզուագէտների կարծիքներ և ուրիշ՝ հին և նոր լեզուների օրինակներ: Բայց պէտք է խոստովանեմ, որ ես գարձեալ չեմ կարող ընդունել պ. Արեղեանի եզրակացութիւնը և շարունակում եմ մնալ իմ նախկին կարծիքնին, ոչ «անտես անելով լեզվի պատմութիւնը» (եր. 56—59), և ոչ իբրև «հին վարժապետ վարժւած լինելով սեռի խնդրի համար հայցական լսել» (եր. 70), այլ տեսականօրէն ճշմարիտ համարելով հայցական հոլովի գոյութիւնը մեր աշխարհաբարի ձևաբանութեան մէջ:

Դեռ բուն հարցին չանցած պէտք է նկատեմ, որ հայերէնի լեզուային որևէ երեսով քնններս սխալ է՝ հիմնել ուրիշ լեզուների երեսովների վրայ, եթէ հայերէնը և այդ լեզուները զարգացման տարբեր ճանապարհներով են առաջ գնացել այդ երեսովի նկատմամբ: Պ. Արեղեանը յաճախ օրինակ է բերում ֆրանսերէնը, որ չունի հայցական հոլով, և առհասաբակ չունի հոլով, բայց ունի հոլովների ֆունկցիաները արտայայտող բոլոր միջոցները. այսինչ նրա մայր լատիններէնը ունի հոլովներ: Ուրեմն և մեր լեզուն էլ կարող է չունենալ հայցական հոլով (իբրև յատուկ ձեւ), ինչպէս և չունի, բայց նրա ֆունկցիան արտայայտում է ուրիշ հոլովների միջոցով:—Ֆրանսերէնը այս պէտքում չէ կարող իբրև օրինակ ծառայել հայերէնին, կամ նրա հայցական հոլով չունենալը չէ կարող արդարացնել հայցականի վերացումը մեր աշխարհաբարից, որովհետև ֆրանսերէնը իր զարգացման ճանապարհին կորցրել է լատինականի հոլովները. այն ինչ արդի հայերէնը (գրաբարի) համեմատութեամբ, ոչ միայն չէ կորցրել հո-

*) Տես՝ «Նոր Դպրոց» № 11:



այլը լուրջ
ուսումնական պիտ
համար առաջ

լովերը, այլ գեռ աւելացրել է («Քաղաք» «տեղի» բառերը գրաբարում ունեն թական ձև *), իսկ աշխարհաբարում 10-ական «Հայ» գրաբարում ունի 11 ձև, իսկ աշխարհաբարում 12): Թրանսերէնը կորցրել է լատիներէնի բոլոր հոլովերը, որոնց թւում և հայցականը. իսկ հայերէնը հակառակ ճանապարհով է զարգացել. նա չէ կորցրել գրաբարի հոլովերը, այլ գեռ աւելացրել է, և, որքան կարելի է նախատեսել, դատելով հոլովերի այժմեան կենդանի ըմբռնումից, ապագայում էլ չի կորցնի:

Ուստի մեր հայցականի լինել կամ չլինելու հարցը քննելիս լաւ է մի կողմ թողնել լատիներէն-ֆրանսերէնը և մեր լեզուի երկոյթների ու կարեների վրայ հիմնել մեր դատողութիւնները:

Պ. Արեգեանն ասում է. ասուզաբաննութիւնը ձևերի ուսումն է. քանի ձև ունի հոլովող բառը՝ այնքան էլ ձեականօրէն հոլով պէտք է լինի, և որովհետև աշխարհաբարում հայցականը յատուկ ձև չունի՝ ուրեմն չպիտի լինի հայցական հոլով աշխարհաբարի ձեագիտութեան մէջ: Նա բերում է լեզուագէտ հայրենագէտ Մէյէի խօսքերը, ցոյց տալու համար, թէ «Բնչ հիմունքով են որոշում ձեականօրէն զատ հոլովը»: Մէյէն իր գրաբարի քերականութեան մէջ դնելով ներգոյականը իրեն զատ հոլով հետևեալ բացատրութիւնն է տալիս. «Յանձնի երկու հոլով որոշ թեքւածքների մէջ մի ընդհանուր ձև ունին, բայց նրանք ուրիշ տեղ (—պ. Արեգեանը բացատրում է—«ուղում է ասել՝ ուրիշ բառերի մէջ») տարբեր ձևեր ունին, և այդ բաւական է զանազանութիւնը պահելու համար: Այս պէս, ներգոյականը, թէպէտեկ գրեթէ միշտ նման է մի ուրիշ հոլովի ձեփ՝ տարբեր հոլով է, նաև՝ որովհետև իր յատուկ ձենին ունի ի տեղուջ տիպի մէջ (և առանձին բառերի մէջ, մանաւանդ յամշ սեանն ձեփ, ամսոյ սեռական-տրականի նկատմամբ), և ապա՝ որովհետև միշտ մինոյն հոլովի հետ չի նոյնանում, այլ երրենն նման է հայցականին և երբեմն տրականին»: Պ. Արեգեանը Մէյէի այս դիտողութիւնը կոչում է «շատ լաւ պատասխան» այն հարցին, թէ ինչ հիմունքներով են որոշում ձեականօրէն զատ հոլովները. բայց անմիջական վարկաբեկում է Մէյէի երկրորդ հիմքը, ասելով, թէ «Հականն առաջինն է, յատուկ հոլովական ձև լինելը. երկրորդը, այսինքն երբեմն մէկ, երբեմն մի ուրիշ հոլովի նման լինելը, միայն գալիս է զօրացնելու առաջինը» (եր. 26): (Սակայն

*) Նոյնիսկ 8-ական. որովհետև եղակի հայցական իսկապէս չկայ գրաբարում, բացի «զիս» ձեից, որ թւում է այն ժամանակի գաւառական թեթեացած արտասանութիւն, փոխանակ ասելու «զինձ»:

Մէյէն իր երկրորդ հիմքին աւելի կարևորութիւն է տալիս, ասելով, որ «նա բաւական է զանազանութիւնը պահելու համար»: Այնուհետև պ. Արեգեանը շարունակում է. «որպէսզի հայցական հոլովը իրեւ ձեականօրէն զատ հոլով մտնէր մեր աշխարհաբարի հոլովների շարքի մէջ, պ. Մալխասեանը ոչ թէ պիտի ասէր, թէ հայցականի փունկցիան կայ, այլ այն պիտի կարողանար ասել մեր հայցականի համար, ինչ որ Մէյէն գրաբարի ներգոյականի համար է ասում... դրա համար պէտք է, որ գոնէ որոշ տիպի բառեր յատուկ ձև ունենային հայցականի, թէկուզ մնացած բոլորի համար հայցականը նման լինէր կամ մի հոլովի, կամ երբմն մի հոլովի, երբեմն մի ուրիշի» (եր. 28): Ինչպէս տեսնում է ընթերցողը՝ այսուղ պ. Արեգեանը ինձ դրած առաջարկութեան մէջ բոլորովին բաց է թողնում Մէյէի երկրորդ հիմքը, որովհետև իր պաշտպանած տեսակէտին յարմար չէ, և միայն առաջին հիմքըն է բերում:

Սակայն ես իմ յօդածում, Մէյէի այս կարծիքից բոլորովին անկախ *), ի պաշտպանութիւն հայցական հոլովի գոյութեան աշխարհաբարի մէջ, թէրել եմ երկրորդ հիմքը. ցոյց եմ տել, որ հայցական հոլովը պէտք է ձեագիտութեան մէջ մտցնի, որովհետև ունի իր յատուկ կիրանութեան ձեր, այսինքն, անորոշանական **) մարդ, տրական մարդու, հայցական մարդ. որոշեալ՝ անւանական մարդը, տր. և հայց. մարդուն:

Այսինքն կայ մի հոլով, որ ունի «մարդ, մարդուն» և այս հոլովը հայցականն է, որ պիտի յիշել ձեագիտութեան մէջ: Որտեղից է այդ բարդ ձեր—այդ չէ երականը. երազիանը այն է, որ կայ այդ բարդ ձեր—և պէտք է ուսուցանի ձեագիտութեան մէջ: Ահա իմ հայեացքը, որ արտայայտել էի իմ յօդածում, որ լրիւ համապատասխանում է Մէյէի երկրորդ հիմքին «ներգոյականը... մի առանձին հոլով է... որովհետև միշտ մինոյն հոլովի հետ չի նոյնանում, այլ երբեմն նման է հայցականին և երբեմն տրականին» ուրեմն և «հայցականը... մի առանձին հոլով է... որովհետև

*) Մէյէի քերականութիւնը ես ձեռքիս տակ չունիմ:

**) Քանի որ «ուղղականը» ձեփ անուն է, իսկ միւս հոլովները փունկցիաներին ես հետևողական լինելու գործ եմ ածում անւանական=փունկցիայի անուն: Կամ պէտք է այս անունն ընդունել, կամ, եթէ «ուղղական» անունը պահենք՝ հետևողական լինելու համար պէտք է միւս հոլովներին էլ ձեական անուններ տանք—«առաջին», երկրորդ ձեփ», կամ «ի, ից... հոլով», կամ մի այլ երրորդ:

միշտ միւնոյն հոլովի հետ չէ նոյնանում, այլ երբեմն նման է անւանականին և երբեմն տրականին):

Գալով Մէյէի առաջին հիմքին, «յատուկ ձեւ ունենալուն մի որոշ տիպի բառերի մէջ», այդ էլ ես ինկատի եմ ունեցել իմ յօդւածի հէնց սկզբում, ասերով, թէ «կան գրական լեզուի մէջ բաւական թւով դարձածքներ, որոնց մէջ պատահում են հայցական հոլովներ՝ յատուկ «հայցականացուցիչ տարրերով, ինչպէս «զօր գիշեր», «բաղնիս գնալ», «աւետիս տալ», «ծառս լինել», «փոխս ընկնել», «խարս տալ» և այլն. բայց այս դարձածքները կարելի է անտես անել, մասսամբ իրրե գաւառաբանութիւններից գրականի մէջ մտած և մասամբ՝ իրրե քարացած ձեւեր, որոնց մէջ հայցականացուցիչ տարրերը այլևս չեն զգացւում իրրե կենդանի օրգանական տարրեր»: Ես ուրիշն անտես չեմ արել հոլով որոշելու այդ հիմքն էլ, որի վրայ մատնանշում է պ. Աքեղեանը: Իմ և Մէյէի վերաբերմունքի մէջ դէպի այդ հիմքը այս երկու զանազանութիւնը կայ. Մէյէն «ի տեղւոջ» տիպը և «յամսեան» ձեւը բաւական է համարել առանձին ներգոյական հոլով գնելու համար, (ինձ յայտնի չէ, համարելով դրանց կինդանի օրգանական ձեւեր, թէ քարացած ձեւեր կամ գաւառաբանութիւններ գրաբարի մէջ). իսկ ես «զօր գիշեր», «աւետիս տալ» ևն ձեւերը բաւական չեմ համարել՝ զրանց հիման վրայ աշխարհաբարում հայցական հոլով գնելու, իրրե գաւառաբանութիւնների կամ քարացած ձեւերի վրայ: Երկրորդ զանազանութիւնն այն է, և որի վրայ առանձնապէս ծանրանում է պ. Աքեղեանը, որ Մէյէն գրաբարում ներգոյական առանձին հոլով գնելու համար բերում է որոշ տիպի («ի տեղւոջ») բառեր. իսկ մեր գրական լեզում չկան որոշ տիպի բառեր, որոնք յատուկ ձեւ ունենային հայցականի համար:

Այս, չկան մեր գրական լեզուի մէջ որոշ վերջաւորութեամբ կամ որոշ յատկութեամբ բառեր, որոնց հայցականը իր սէփական ձեւն ունենար: Բայց միթէ, ինդըրի այս կէտում, անպատճառ որոշ տիպի բառեր և միայն տիպի բառեր պէտք է լինին, որի լինելուց կամ չլինելուց կախւած լինի հայցականի լինել կամ չլինելը:

Եթէ գրաբարի «ի տեղւոջ» տիպի բառերը և «յամսեան»-ի նման բառեր, ընդ ամենը մի քանի տասնեակ բառ, բաւական են եղել Մէյէին, երկրորդ հիմքն էլ ինկատի ունենալով, գնել առանձին ներգոյական հոլով. Եթէ ինքը պ. Աքեղեանը, մի քանի հատիկ ոչ տիպի գերանունների սեռական ձեն ինկատի ունենալով իր համառօտ քերականութեան մէջ հարկ է համարել գնել սեռական հոլով, մենք նոյնքան իրաւունք չունինք, հէնց այս տեսա-

կէտից, գնել մեր աշխարհաբարում հայցական հոլով, քանի որ հարիւրաւոր բառեր կան (դարձւածքների և որոշ շարադասութեան մէջ), որոնք ունին յատուկ հայցականի ձեւ: Ես իմ յօդւածում բերել էի միայն մի քանի հատ՝ իբրև օրինակ, կոչելով նրանց գաւառաբանութիւնից գրականի մէջ անցած և քարացած ձեւեր: Դը բանց վրայ կարելի է աւելացնել և բազմաթիւ հայցական հոլովներ՝ թէ իբրև քարացած ձեւեր, թէ գրաբարից առնւած, կենդանուցն զգացւող հայցականներ՝ գրական և ժողովրդական բանաստեղծութիւնների մէջ, և թէ վերջապէս բարդ բառերում: Այսպէս օրինակ, հոգս տանել հոգս քաշել («հոգ» ձեի հետ միաժամանակ). պաս (=պահս) բռնել, պաս պահել (պահք, պահոց ձեի հետ միաժամանակ). «բերանս ի վայր», «բերանս ի վեր» (բերան ձեի հետ), «փորնսող գնալ», (փորսող ձեի հետ). «զօրը բանել» (օր ձեի հետ): «Ծնդաստեղօք զի՞նչ կայ սիրուն, քան զանձկալի եղբայր անուն... տեսնէ զորդիս իր քովէ քով» (Պէշիթի): *) «Դու ես քան զամին եղանակ սիրուն,... զի՞նչ անդորր է քուն (Գ. Քաթիպա): «Զի՞նչ ու զի՞նչ տամ լողուրդին... զիմ շապիկ տամ լողուրդին. «զիմ վզին վլոնց կուտամ»: Գնացէք տեսէք ով է կերել զէծ. գնացին տեսան գէն է կերել զէծ»: «զամին, զլոմին» կերել է. «ի զարմանս իմ»: (զարմանք ձեի հետ*) «օրէնսպէտ», «մեղսասէր» (օրէնք, մեղք ձերի հետ) ևայլն ևայլն: Արեգօք այս ձերը պէտք է հալածւին մեր այժմեան լեզւից, կամ այս ձերի մասին պէտք է ոչինչ չասւի աշակերտին: Ձևագիտութիւն սովորող աշակերտը պիտի չիմանայ «մեղսասէր» բարդ բառի կազմութիւնը, քանի որ զիտէ «մեղք» ձեւը. կամ չիմանայ, թէ ինչ են «զէծ» «զիմ վլոնց» ձերը, քանի որ իրեն ծանօթ են «էծ», «իմ վլոնց» ձերը: Մեր գրական լեզւ մէջ մուտք են զործել և շարունակում են գեռ մտնել բազմաթիւ ստուգաբանական ձեր գրաբարից և գաւառաբարաններից ինչ որ ես համարում եմ թէ բնական և թէ օրինաւոր, եթէ այդ ձերին լեզուն կարիք ունի իր զարդացման շաւդի մէջ: Այդ բոլոր ձերը անւանելու, բացաբերու միջոց ունի մեր աշխարհաբարի ստուգաբանութիւնը. միթէ միայն հայցական ձերն պէտք է զլացւի անուն և բացատրութիւն նրա մէջ:

Այսպէս ուրեմն, Մէյէի երկու հիմքերից, որոնցով կարելի է որոշել զատ հոլով, մէկը, որին կարենութիւն է տալիս Մէյէն քացարձակ կերպով կայ մեր գրական լեզւի մէջ, միւսը, որի վրայ

*) Այս օրինակը արևմտեան հայոց լեզւից բերի, որովհետեւ մեր դպրոցական դասագրքերի մէջ ընդունվ է իբրև ուսանելի նիւթ:

աւելի ծանրանում է պ. Արեգեանը՝ մասամբ կայ (ոչ փոքրաթիւ տիպի, բայց բազմաթիւ բառերի, դարձւածքների և բարդութիւնների մէջ): Ուստի հէնց միայն այս տեսակէտից նայելով անհրաժեշտ է հայցական հոլով գնել մեր ստուգաբանութեան մէջ:

Ինչպէս քիչ վերը ասացի՝ պ. Արեգեանը Մէյէի այս երկրորդ հիմքը վարկարեկում է: Մի քիչ մանրամասն կանգ առնենք այս կէտի վրայ: Պ. Արեգեանն ասում է (եր. 28) «եթէ լինի էլ—լինի եմ ասում, որովհետեւ իսկապէս չկայ երկրորդ հիմունքը—երբեմն մէկ, երբեմն մի ուրիշ հոլովի նման լինելը, արդարե ննաւարոր կլինի (գծածը պ. Արեգեանին է) ձեաբանութեան մէջ հայցական հոլով գնելը, բայց այդ հիմունքը մենակ, առանց առաջնին, այսինքն յատուկ հոլովական ձեի, տեսանք, գեռ բաւական չէ զատ հոլով գնելու համար: Եթէ այդպէս լինէր՝ այն ժամանակ գրաբարում և արևմտեան բարբառում պէտք է զատ ներգոյական հոլով գնէլը պ. Արեգեանը: Բայց ենթադրենք թէ այդ հիմունքը մենակ նշանակութիւն ունի»...

Պ. Արեգեանի այս խօսքերից եղբակացնում ենք.

1) Նա չէ ընդունում, որ երկրորդ հիմքը (հայցականի երբեմն մէկ, երբեմն մի ուրիշ հոլովի նման լինելը) գոյութիւն ունի մեր լեզւի մէջ:

2) Եթէ երկրորդ հիմքի գոյութիւնը ապացուցւի՝ նա մենակ բաւական չի լինի զատ հոլով անպատճառ գնելու, այլապէս ես պէտք է անհրաժեշտորէն ներգոյական հոլով ընդունէի գրաբարի և արևմտեան աշխարհաբարի համար, և որովհետեւ ես այս չեմ ընդունում ուստի, հետեարար, իրաւունք չունիմ, լոկ երկրորդ հիմքի զօրութեամբ, զատ հայցական հոլով գնել մեր ձեաբանութեան մէջ:

3) Եթէ այդ գոյութիւնը ապացուցւի՝ այս գէպքում ննաւարոր կլինի հայցականը գնել ձեաբանութեան մէջ, (այսինքն—ես այսպէս եմ հասկանում—կարելի կլինի գնել բայց ոչ թէ անհրաժեշտ պարտաւորութիւն գնելու):

Առաջին կէտը պարզապէս մի թիւրիմացութիւն է. հէնց ինքը պ. Արեգեանը իր բրօշիւրի 32-րդ երեսում բերում է 14 օրինակ հայցականի զործածութեան, որոնց մէջ շ գէպքում հայցականը ձեռվ նման է անւանականին, իսկ միւս շ գէպքում արականին: Մեր հայցականը իրօք «երբեմն ուղղականին է նման, երբեմն տրականին». բայց թէ որ գէպքերում է նման մէկին և որ գէպքերում միւսին՝ այս առանձին հարց է: Ուրեմն նրա առաջին կէտի վերաբերմամբ պէտք է, ակնյայտնի իրողութիւնն ինկատի ունենալով, ասենք. «Մէյէի երկրորդ հիմքը գոյութիւն ունի

մեր գրական լեզուում. հայցականը ձևով երբեմն նման է անւանականին և երբեմն տրականին. բայց որ դէպքում որ հոլովին նման լինելը որոշ և հաստատուն կանոն չունի»: (Այս մասին քիչ յետոյ):

Երկրորդ կէտը, թէպէտ տրամաբանական ճիշտ (բայց ոչ համոզիչ) * եղրակացութեան ձև ունի, սակայն իր նշանակութիւնը կկորցնէ, երբ բացատրեմ, թէ ինչու ես գրաբարի և արևմտեան աշխարհաբարի մէջ չեմ ընդունում առանձին ներգոյական հոլով: Ես առանձին հոլով չեմ համարում այն բառաձեւը, որոնք կադմուում են որևէ հոլովից՝ որևէ նախդրի օգնութեամբ. «ինմա», «ի նոսա» իմ հասկացողութեամբ տրական և հայցական հոլովներ են՝ ի նախդրով. «զնովաւ» գործիական հոլով է՝ զ նախդրով և այն: Միւս կողմից ես Մէյէի առաջին հիմքն էլ չեմ ընդունում «տեղուց» տիպի, կամ «ամսեան» ձեի մասին, իբր թէ գրանք ներգոյականի ձեւը լինին. — դրանք պարզ սեռական-տրական հոլովներ են, ինչպէս ընդունում է և պրօֆ. Մառը: «Ամսոյ» և «ամսեան»՝ բարբառային զանազանութիւններ են և ոչ հոլովական, ինչպէս ներկայուում նրանց համապատասխան աշխարհաբարի ձևերը՝ «ամսու», «ամսեան»: Այս պատճառով ես գրաբարում չեմ ընդունել յատուկ ներգոյական հոլով, այլ միայն համաձայնութեան մէջ բացատրել եմ, թէ այդ փունկցիան ինչ տարբեր միջոցներով են արտայայտում գրաբարի մէջ և ինչու տարբեր են այդ միջոցները: — Գալով արևմտեան աշխարհաբարին՝ այստեղ նոյնպէս չկայ ներգոյական հոլով՝ համաձայն Մէյէի երկրորդ հիմքի: Այստեղ ներգոյականի պաշտօնը վարում է հայցականը՝ «իրենց տները նստեր են»: Միւս գործածութեան մէջ՝ «իրենց տներուն մէջ նստեր են» մենք նկատում ենք երկու բառից (նախադրութիւնից և իր խնդրից) կազմած մի խօսք, և ոչ թէ մի հոլով: Եթէ «տներուն մէջ» հոլովական ձև համարէինք՝ ապա պէտք է մեր քերականութիւնների մէջ

*) Յիբաւի, այդ եղրակացութիւնից այս երկասյրաբանութիւնն է ուղում հանել պ. Արեղեանը. — կամ Մէյէի երկրորդ հիմքը մենակ բաւական չէ զատ հոլով դնելու համար, կամ ես սխալուում եմ ներգոյական հոլով չընդունելով գրաբարում և արևմտեան աշխարհաբարում: Շատ լաւ. ենթադրենք թէ ես սխալուում եմ ներգոյականի վերաբերմամբ. սրանից ուրեմն պէտք է հետեւ, ըստ պ. Արեղեանի, որ Մէյէի երկրորդ հիմքը լիակատար նշանակութիւն կատանայ, ուրեմն և զատ հայցական հոլով պէտք է դրւի: Սակայն իրողութիւնն այն է, որ կասկածելի են այն օրինակները, որոնց վրայ Մէյէն հիմնել է, իր ըստ ինքեան ուղիղ, սկզբունքը, և ես չեմ սխալել:

Ներգոյականը միշտ երկու ձևով դնէինք — «տանը, տան մէջ», «տներում, տների մէջ», որ չենք անում: Այս է պատճառը, որ արևմտեան աշխարհաբարում էլ—եթէ բացի այս երկուսից ուրիշ գործածութիւն չկայ — առանձին ներգոյական դնելու առիթ չկայ համաձայն Մէյէի երկրորդ հիմքին և պ. Արեղեանի եղրակացութեան երկրորդ կէտին,

Վերջապէս ի՞նչ գործ ունի Մէյէի երկրորդ հիմքի հետ այն հանգամանքը, թէ ես արդեօք ընդունեմ եմ թէ ոչ զատ ներգոյական հոլով գրաբարի և արևմտեան աշխարհաբարի համար:

Այսպէս ուրեմն աեսում ենք, որ Մէյէի երկու հիմքերն էլ ծառայում են յօդուտ իմ պաշտպանած տեսակէտին, թէ մեր աշխարհաբարի ձևագիտութեան մէջ պէտք է դրւի հայցական հոլով, և որ ես այդ երկու հիմքերն էլ ինկատի ունեցել եմ իմ առաջին յօդւածիս մէջ: Բայց ես աւելի առաջ եմ գնում: Հայոց արևմտեան գրական լեզուում հայցական հոլովը, յատուկ ձեռով, ընդհանուր գործածութիւն ունի, կարելի է ասել՝ օրգանական պահանջ է այդ լեզւի ստուգաբանութեան մէջ:

Մեր գաւառաբարբառներից շատերում, զլխաւորապէս տաճկահայոց մէջ, հին հայցական հոլովը իր բնորոշ զոով գեռ կենդանի է և զարմանալի հետեղականութեամբ գործ է ածւում ոչ միայն բուն հայցական բառի (գոյականի), այլ և նրա յատկացուցչի և որոշիչի վերաբերմամբ, որ նշան է այդ հայցականակերտ տարբի կենդանի լինելուն և գիտակցաբար ըմբռնւելուն: Արդ՝ այս երկոյթները մեզ պէտք է թելադրէին շրջահայեաց լինել և յախուռն կերպով չմերժել հայցական հոլովը մեր արևմելահայոց գրական լեզւի ստուգաբանութիւնից: Պ. Արեղեանի պատասխանը առաջուց յայտնի է, նա ասել է արդէն. «աշխարհաբարի ստուգաբանութիւնն աշխարհաբարի ստուգաբանութիւն է... աշխարհաբարի ստուգաբանութիւնը գրաբարի համար չեն յօրինում և ոչ էլ ուսւերէնի համար» (բրօշ. եր. 76): Նոյնը և յօդւածում. «կարծում ենք աշխարհաբարի գրականութիւնը մեր աշխարհաբարի համար լինի և ոչ զրաբարի. կամ օտար լեզուների» (եր. 15):

Այս սկզբունքի գէմ չէ կարելի վիճել: Բայց նախ հարց է. արդեօք արևմտեան հայոց գրական լեզուն և հայոց արևմտեան և արևելեան գաւառաբարբառները գրաբար կամ օտար լեզուներ են, որ նրանց ստուգաբանական յատկութիւններն անտես անւելին արևելեան հայոց գրական լեզւի ստուգաբանութեան մէջ. և երկրորդ տարբեր բան է սովորեցնել երեխային «հայցական զտուն, զտղայ, զիս» հոլովը, և տարբեր հասկացնելը, թէ այս

և այն տեղերում հայցական հոլովը կազմւում է այս ձևով, փոխանակ մեր «տուն, տղայ—տղայի, ինձ» ձևերին։ Այս և սրա նման բաները հասկացնելը կարեոր է՝ որպէսզի մեր ծխական դպրոցներն աւարտող աշակերտներն էլ կարողանան հասկանալ արևմտեան գրական լեզուն, իսկ գաւառաբարբառները գոնէ այնքան՝ որքան կարող է դրան նպաստել քերականութիւնը։ Հայցական հոլովը ստուգաբանութիւնից դուրս ձգելով՝ պ. Արեգեանը բոնազբօսիկ կերպով խզում է մի կապ մեր գրական լեզուի և արևմտեան հայոց գրական լեզուի ու շատ գաւառաբարբառների մէջ։ այս-ինչ ոչ միայն քաղաքական նկատումներ, այլ ոոյնիսկ զուտ լեզուային շարժառիթներ մեզ պէտք է զրդէին այդ կապը պահպանել և ուժեղացնել. որովհեակ մեր գրական լեզուն, իր զարգացման շրջանում, մսունդ պէտք է առնէ ոչ միայն օտար լեզուներից, այլ և գրաբարից, գաւառաբանութիւնից և արևմտեան հայոց գրական լեզուից, ինչպէս և իրօք տեղի է ունենում։

Եթէ ճիշտ է այս հայցակետը՝ ապա անհրաժեշտ է հէնց մեր ստուգաբանութեան մէջ հոլովների շարքը մըտցնել և հայցական հոլովը, բացատրել նրա (ինչպէս և միւս հոլովների) էական նշանակութիւններն ու կազմութեան զլիսաւոր կանոնները *), և ապա, սոյն ստուգաբանութեան մէջ, տեղեկու-

*) Գլխաւոր և երկրորդական կանոնները պէտք է զանազանել. Պ. Արեգեանը (եր. 30) ասում է. «Առանձին հայցական հոլով գնել... հնարաւոր կլինէր միայն այն ժամանակ... եթէ գոնէ, ինչպէս պ. Մալխասեանն է կարծում, հայցականը ամեն դէպրում (իմ գծածներն են) ուղղականի նման լինէր, միայն անձի անունները, երբ որոշեալ են, միշտ տրականի ձևով հայցական ունենային»։ Սակայն ես իմ յօդւածում բերել եմ միայն՝ «անորոշ՝ մարդ-մարդու-մարդ, որոշեալ՝ մարդ-մարդուն-մարդուն» զուգահեռականները, իբրև զլիսաւոր տիպ հայցականի կազմութեան, բայց ոչ թէ մանրամասն կանոններ աւանդել թէ որ դէպրում և ինչպէս է կազմում հայցականը. բացի այդ՝ ես չեմ ասել, թէ «ամեն դէպրում» կամ «միշտ» հայցականը այսպէս է կազմում, ինչպէս ինձ վերադրում է պ. Արեգեանը, և ապա ներքում, բերելով ամենին յայտնի բազմատեսակ շեղումներ ընդհանուր կանոնից։ Բայց զարմանալին այն է, որ պ. Արեգեանը մի ուրիշ տեղ գրում է (70). «Տեսէք թէ ամեն ուսուցիչ որքան հեշտութեամբ առանց հայցականի կրացատրի («նա սիրում է իր տունը և իր երեխաներին նախադասութիւնը»). առաջինը (տունը) զրւած է ուղղ. որովհետև անշունչ առարկայ—իր է. երկրորդը (երեխաներին) տրական, որովհետև անձի անուն է» (պէտք էր աւելացնէր ուսուցիչը «և որոշեալ է»)։ Էլ ինչու էր ինձ հերքում պ. Արեգեանը, երբ ինքն էլ իր դասագրքով պարապող ուսուցչին սոյն պահանջն է տալիս հայցականի կազմութիւնը բացատրելու

թիւն տալ, որ հայցականը հին հայերէնում այս-ինչ ձեւ է ունեցել, և այս ձեւը գործածական է այժմ միքանի գաւառաբարբառներում, արևմտեան հայոց գրական լեզուում և երբեմն մեր լեզուում—համապատասխան օրինակներով։

Ապա ուրեմն զատ հայցական հոլով գնելու համար Մէջէից ցոյց տւած երկու հիմքերը ունենալով հանդերձ (մէկը բացարձակ, միւսը թերի չափով), մեր արդի գրական լեզուն ունի և աւելի կարեոր հիմք—այդ հոլովի յատուկ ձեր անկասկածելի գոյութիւնը արևմտեան հայոց գրական լեզուում և զանազան գաւառաբառներում, որոնց հետ մեր գրական լեզուի կապը միքանի տեսակէտներով անհրաժեշտ է պահպանել ու զօրացնել։

Ես չեմ ուզում կրկնել և ընդարձակել իմ ասածները առանձին հայցական հոլովի անհրաժեշտութեան մասին՝ Փունկցիաների յատակ ըմբռնողութեան համար և պատասխանել այն առարկութիւններին, որ պ. Արեգեանը անում է նրանց դէմ։ Դրա համար հարկաւոր կլինէր շատ տեղ և ժամանակ, որոնցից ես զուրկ եմ։ Պ. Արեգեանի բոլոր առարկութիւններն ինկատի ունենալով հանդերձ ես պնդում եմ իբրև անկասկածելի վաստի վրայ, թէ հայցականի վերացումը ստուգաբանութեան միջից կլիսաէ հոլովների ֆունկցիաների գիտակցական յատակ ըմբռնողութեան, քանի որ մի կողմից անկարելի է հոլովի ձեւը անջատել նրա ֆունկցիայից, և միւս կողմից, ինչպէս պ. Արեգեանն էլ ընդունում է (քիչ յետոյ այս կտեսնենք), որ հէնց հոլովներով ուղղականի մասին պահպան աշակերտը պէտք է գաղափար ստանայ հոլովների ֆունկցիաների մասին։

Ցոյց տալու համար, թէ ինչ խառնաշփոթութիւն կառաջացնէ նորուս աշակերտի համար հայցականի վերացումը հոլովների շարքերից *) ես կզիմեմ նոյնիսկ պ. Արեգեանի վկայութիւններին։

համար. Եթէ այստեղ պ. Արեգեանը հայցականի կազմութեան գլխաւոր կանոնն ունի ինկատի, ներելի չէ նոյնը և ուրիշին։

*) Իմ յօդւածում ես ասել էի. «Եթէ հասուն, քերականական գիտակցութիւն ունեցողի համար կարելի է գուրս ձգել քերականութիւնից հայցական հոլովը, եթէ նա յատուկ ձեւ չունի՝ տարրական քերականութեան մէջ, որտեղ աշակերտը առաջին անգամ գաղափար պիտի կազմէ հոլովների ու նրանց ֆունկցիաների մասին՝ հայցականի վաստակումը միայն վասականապէ»։ Պ. Արեգեանը ինձ պատասխանում է, «ինչ որ հասուն, քերականական գիտակցութիւն ունեցողի համար կարելի է գուրս ձգել քերականութիւնից, ահաս երեխաների համար յօրինած տարրական քերականութիւնից հէնց պէտք է գուրս ձգել», և իր այս տեսակածառապատճեն պէտք պատճառապատճեն է։ Մենք միմեանց չենք հասկանում։ Ես

«Հայցական հոլովը» բրօշիւրում նա գրում է (եր. 61—62). «Բառերի դերերը խօսքի մէջ վարժապետներն աշակերտներին սովորեցնում են, իսկապէս գիտակցել են տալիս, համախմբում, տեսակաւորում են դեռ հոլովել չսովորած, և որ աշակերտը ենթակայ, ստորոգեալ, կրող առարկայ, տեղի պարագայ և այլն որոշում է դեռ ոչ ուղղական=անւանական, ոչ հայցական և ոչ արական և այն հոլովներ սովորած» (I). Իսկ եր. 69 շարունակում է. «Միթէ նա (այսինքն ես) կարծում է, թէ աշակերտը փունկցիայի գիտակցութիւն չի ստանում, երբ իմ քերականութեամբ սովորում է թէ ենթակայ և կրող առարկայ կան և թէ 1) ենթական գրում է ուղղական հոլովով... 2) կրող առարկան գրում է ա) երբեմն ուղղական հոլովով... բ) երբեմն էլ գրում է արական հոլովով» (II): Իսկ իր «Աշխարհաբարի հոլովներում» (եր. 84) պէտք է իրեն եղբակացութիւն գրում է. «Ինչպէս կոչականը, նոյնպէս և հայցականն ու սեռականը միայն ըստ նշանակութեան կարելի է հոլով համարել ուստի դրանց ուսումը պէտք է մտնի շարա՞իւսութեան մէջ... Հայցական հոլովը ոչ թէ ձեր համար պիտի գործածել, այլ ուղղականի և տրականի հոլովական ձերի իրեն անցողական բայերի սեռի խնդիր գործածութեան համար» (III):

Հիմա վեցներ այս նախադասութիւնները—

«Որսորդը տեսաւ մի աղւէս». «Որսորդը սպանեց աղւէսին», և սրանց վրայ գործադրենք պէտք. Արեղեանի ցուցումները:

1. Աշակերտը, դեռ հոլովել չսովորած, պէտք է սովորի և որ շում է, որ «որսորդը «ենթակայ է. «աղւէս», «աղւէսին»—կրող առարկայ» (I):

2. Աշակերտը սովորում է հոլովել և ճանաչում է, որ «աղւէս» ուղղական է, «աղւէսին» արական. նոյնպէս սովորում է, որ կրող առարկան գրում է երբեմն ուղղական և երբեմն արական (II):

3. Այսուհետեւ, երբ աշակերտը բայի սեռերն էլ սովորում, (կամ աւելի ուշ, երբ սկսում է շարահիւսութիւն սովորել)՝ նա

սուսմ եմ. փոքրին անհրաժեշտ է հասկացողութիւն տալ հայցականի և նրա ֆունկցիայի մասին. հասուն մտքին՝ կարիք չկայ, որովհետեւ նա արդէն ստացել է և գիտէ. Պ. Արեղեանը ասում է. չպէտք է տալ, «որովհետեւ խակ մտքի գործ չէ մի առանձին գոյութիւն չունեցող, մի ոչ բառածն և ոչ ձեռքի հաստատուն, որովհետեւ ունեցող հոլով որոշելը և սովորելը միայն ֆունկցիաներով». (բառ. 45):—Ես կարող եմ ասել, որ խակ միտքը հեշտութեամբ ըմբռնում է այդ հոլովը և իր ֆունկցիան,

«աղւէս», «աղւէսին» սեռի խնդիրները պէտք է կոչէ հայցական հոլովով սեռի խնդիր (III):

Ի՞նչ դուրս կգայ սրանից.—այն, որ միենոյն «աղւէս» ձեր աշակերտը նախ պէտք է սովորի կոչել ուղղական, իսկ մի քանի ժամանակից յետոյ՝ հայցական. «աղւէսին» ձեր նախ արական, և ապա հայցական: Աշակերտի ըմբռնողութեան այս դրութիւնը կարող ենք ձևակերպել այսպէս.

Ուղղական=հայցական. արական=հայցական. և իբրև եղակացութիւն աշակերտի համար՝

ուղղական=տրական.

այսինքն՝ պէտք է մեթողով, հէնց նրա առաջարկած եղանակը զործագրելով՝ մենք կյանգենք մի խառնաշփոթութեան հոլովների յատուկ ըմբռնողութեան տեսակէտից *):

Արգեօք աշակերտը չի հարցնի ուսուցչին, թէ ապա ինչո՞ւ առաջ իրանք «աղւէս» ուղղական էին կոչում, իսկ «աղւէսին» արական: Ուսուցիչը գեռ կարող է բացատրել, թէ «աղւէս» ուղղական էին կոչում ծնիլի պատճառով, որովհետեւ դա բառի ծնեն է. իսկ «աղւէսին» արական կոչելը նա չի կարողանայ բացատրել ոչ ձեռվ, (որովհետեւ «արական» բառը ձեր անուն չէ, այլ ֆունկցիայի) և ոչ նշանակութեամբ, ֆունկցիայով, (որովհետեւ «աղւէսին» հայցականը «տալու» ֆունկցիային չէ համապատասխանում):

Արգեօք չի հարցնի աշակերտը, եթէ «աղւէս» ուղղական է, «աղւէսին» արական (?), էլ ի՞նչ կարիք կայ այժմ նրանց հայցական կոչելու. կամ եթէ գրանք հայցական են, էլ ի՞նչու սկըզբից եեթ նրանց հայցական չկոչեցին: Ես չեմ կարծում, թէ ուսուցիչը կարողանայ խակ աշակերտին բացատրել «հոլովըստեմի» և «հոլով բառ նշանակութեան» հասկացողութիւնները, մանաւանդ որ վերջին տերմինը շատ և շատ առաձգական հասկացողութիւն է:

Ուստի, մի կողմ թողնելով նախընթաց խորհրդածութիւնները՝ հէնց այս, պէտք է մեթողի անխուսափելի խառնաշփոթութեան առաջն առնելու համար, հէնց ստուգաբանութեան մէջ, հոլովելիս պէտք է սովորեցնել նաև «հայցական աղւէս—աղւէսին» (իսկապէս՝ անւանական և հայցական՝ աղւէս, արական և հոլովը):

* Ինձ պատմել են, թէ Երևանի թեմական դպրոցում, որտեղ ընդունաւած է պէտք է պատմագրել, վերը ցոյց տրւած խառնաշփոթութիւնից խուսափելու համար՝ ուսուցիչներն ստիպւած են եղել հէնց ստուգաբանութեան մէջ մտցնել հայցական հոլովը:

և հայցական՝ աղւէսին, որոշեալ և անորոշ հոլովերի ուսուցման մէջ:

Հստ երեսյթին, պ. Արեգեանը նոյնպէս հակառակ չէ ստուգաբանութեան մէջ յատուկ հայցական հոլով զնելու, բայց չէ անում այս՝ ինչ-ինչ պատճառներով: «Աշխարհաբարի հոլովերում նա ասում է (եր. 15). «Անշուշ կարելի է գրաբարի, մասամբ և օտար լեզուների քերականութեան ուսման դիւրութեան համար ուղղականի այդ գործածութիւններն աշխարհաբարի քերականութեան մէջ զնել իրեւ հայցական. բայց կարծում ենք աշխարհաբարի քերականութիւնը մեր աշխարհաբարի համար լինի և ոչ գրաբարի կամ օտար լեզուների»: Իսկ «Հայցական հոլովի մէջ ասում է. (եր. 30) «Եթէ ուղենանք էլ ձևաբանութեան մէջ հոլովերի շարքում առանձին հայց. հոլով զնել, այդ անհնարին է ճշտեամբ անհլ, Այդ հնարաւոր կլինէր միայն ժամանակ, երբ բառերի մի մասի համար հայցականը հաստատ ու որոշ կերպով ուղղականի հետ նոյնանար, իսկ միւս մասի համար՝ տրականի հետ. կամ եղակին մի հոլովի հետ նոյնանար, յոդնակին՝ մի ուրիշի հետ. կամ թէ գոնէ, ինչպէս պ. Մալխասիանն է կարծում, հայցականն ամեն դէպքում ուղղականին նման լինէր, միայն անձի անունները, երբ որոշեալ են, միշտ արականի ձևով հայցական ունենային»: Այս նոյն միտքը, աւելի ընդհանուր խօսքերով, յայտնում է և եր. 76. «Եթէ ուղենք էլ, գրաբարի և ոռուսերէնի ուսման դիւրութեան տեսակէտից, այդ անհլ (այսինքն զատ հայցական հոլով զնել), մենք միայն մի թերի, անձիշտ բան կանենք, որովհետեւ մեր աշխարհաբարում հայցականի համար ձեերի հաստատուն կիրառութիւն չկայ: Հայցականի ձեզ որոշել չի կարելի խօսքից դուրս»:

Պ. Արեգեանի վերոյիշեալ մտքերը կարծում եմ կարելի է հետեւեալ կերպով ամփոփել:

Պ. Արեգեանը կարելի, նոյն-իսկ ցանկալի է համարում զատ հայցական հոլով զնել մեր գրական լեզվի ձեւգիտութեան մէջ՝ գրաբարի և ոռուսերէնի (կամ օտար լեզուների) ուսման դիւրութեան համար.—բայց այս չէ անում երկու պատճառով. 1. սկզբունքից (մեր ստուգաբանութիւնը—մեր լեզվի համար). և 2. գործնական գժւարութիւնից (անհնարին է ճիշտ կերպով որոշել հայցականի կրկին ձեերի կիրառութեան պայմանները):

Քննենք այս կէտերը:

Եթէ ի նկատ առնենք այն բաղմաթիւ յատուկ հայցականի ձեերը, որ մեր գրական լեզում պահպանւած են գարձւածքների, երգերի, բարգութիւնների մէջ. որ արևմտահայոց գրական լեզուում

յատուկ հայցականի ձեզ սովորական երեսյթ է. որ շատ գաւառաբարբառներում կենդանի է նախկին յատուկ հայցականի ձեզ՝ այն ժամանակ «գրաբարի և օտար լեզուների ուսման դիւրութեան» վրայ պէտք է աւելացնենք և «մեր գրական լեզվի հայցականի բազմաթիւ երեսյթների, արևմտահայոց գրական լեզուն ու բարբառների հայցականը հասկանալու» կարիքը. և այն ժամանակ ոչ թէ «կարելի» կամ ցանկալի, այլ անհրաժեշտ պէտք է համարւի զատ հայցական հոլով զնելը մեր հոլովերի շարքում: Այս գէպքում պ. Արեգեանի առաջին սկզբունքային առարկութիւնն ինքնին ոչնչանում է, որովհետեւ հայց. հոլով պարունակող ստուգաբառութիւնը հէնց մեր լեզվէ ուսման դիւրութեան համար կլինի, և ոչ թէ միայն գրաբարի և օտար լեզուների:

Աւելի ծանրակշիռ է պ. Արեգեանի երկրորդ առարկութիւնը, որի մէջ և իսկապէս պէտք է փնտռել գաղտնիքը, թէ ինչո՞ւ պ. Արեգեանը վճռել է իր ստուգաբառնութիւնից դուրս ձգել հայցական հոլովը: Թէպէտ հայցականը սեփական ձև չունի, բայց ունի սեփական կիրառութեան ձև (կամ եղանակ, ինչպէս ուղղում է իմ բառը պ. Արեգեանը), այսինքն այն ինչ որ կազմում է Մէյէի երկրորդ հիմքը՝ զատ հոլով զնելու համար: Բայց ցաւն այն է, որ «մեր աշխարհաբարում հայցականի համար ձեերի հաստատուն կիրառութիւն չկայ: Հայցականի ձեզ որոշել չի կարելի խօսքից դուրս»:

Վերջին նախագասութիւնը կարեսրութիւն չունի: Տրականն էլ, անւանականն էլ չի կարելի որոշել խօսքից դուրս. «որսորդ» նոյնքան անւանական է, որքան և հայցական. «որսորդին» նոյնը և ոռուսերէնում ՃՈՒ նոյնքան անդամն է, որքան և հայցական, ՕՇԱ նոյնը և ուրիշ լեզուների մէջ:

Ուրիմն կարեոր առարկութիւնը՝ հայցականի կրկնակի ձեերի կիրառութեան հաստատուն կանոն չունենալի է: Կիրառութեան հաստատուն կանոններ, ըստ պ. Արեգեանի, կարող էին տեղի ունենալ հետեւեալ երեք դէպքերում.

1) Եթէ բառերի մի մասի համար հայցականը ուղղականի հետ նոյնանար, իսկ միւս մասի համար՝ տրականի հետ.

2) Կամ եթէ եղակին մի հոլովի հետ նոյնանար, յոդնակին՝ մի ուրիշի:

3) Կամ հայցականը ամեն դէպքում ուղղականի նման լինէր, միայն որոշւած անձի անունների մէջ միշտ արականի նման:

Այս երեք կէտերից երկրորդ դէպքը զոյտութիւն չունի. Ուրիմն չխօսենք նրա մասին: Իսկ առաջին և երրորդ կէտերը միևնուն

պայմանն են պարունակում, առաջինը ընդհանուր խօսքերով, երրորդը տեսակաւորելով «բառերի մի մասը=որոշած անձի անուններ»-ով, այսպէս որ Յ-բդ կէտին գրական պատասխան տալով պատասխանած կլինինք գրականապէս և առաջին կէտին:

Արդ՝ ես կարծում եմ, որ երրորդ կէտը մենք կարող ենք և պէտք է ընդունենք իրեն հիմնական կանոն մեր հայցականի համար, ամսայն իրաւամբ դուրս ձգելով այդ բանաձեկից «ամեն դէպրում» և «միշտ» բառերը:

Ահա թէ ինչու ես իրաւացի եմ համարում բանաձեկից հանել այդ բառերը, որոնք ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ պահանջ հայցականի կիրառութեան բացարձակ կանոն ունենալու առանց բացառութիւնների:

Եթէ մենք օրինաւոր համարենք այդպիսի պահանջ այն ժամանակ պէտք է հրաժարենք առնասարակ որևէ հոլով զնելուց մեր քերականութեան մէջ, աւելին ասեմ—պէտք է հրաժարենք որևէ քերականական կանոնից: Ոչ ժի դէպրում այնքան ճշմարիտ չէ առաջը—«չկայ կանոն առանց բացառութեան», որքան քերականութեան մէջ, մասնաւորապէս մեր քերականութեան մէջ: Մեր գրական լեզուն դեռ հաստատուն նօրմաներ չունի. նա զեռ իր կազմակերպութեան եռուն վիճակի մէջն է. նրա շէնքի համար նիւթեր են մատակարարում գրականութիւնը, գպրոցը, գաւառը, գրաբարը, հարկան ազգերը, եւրոպական լեզուները. նրա կերպարանքի վրայ ազգում են անհատական ճաշակը, տեղական արտասանութիւնը, անալոգիան և այլ բազմատեսակ գործոններ, միմեանց նման, միմեանց հակառակ ու հակառական յատկութիւններով: Այս գործօնները մեր գրական լեզուն տալիս են մի քաօսական կիրարանք—մի պղտորութիւն: Ժամանակ կգայ, ազգի լեզույին ընազդը այս խանոսափնթորութիւնից գէն կգտէ ինչ որ անյարմար կգտնէ, զիրդը կնատի, լեզուն կծորանայ, «յարդ և ի զարդ» կգայ՝ այժմեան համեմատութեամբ, Բայց մինչև այդ օրերը հասնելը մենք գործ ունինք մի լեզու հետ, որ լիքն է անկանոնութիւններով—բացառութիւններով:

Լեզու այս քաօսական գրութեան մէջ չէ կարելի պահանջել բացարձակ կանոն, ինչպէս լեզույին ուրիշ երեսյթների, այսպէս էլ հայցականի կրկին ձեերի գործածութեան համար, որ և չկայ. այլ սրատես քերականագէտի գործը պիտի լինի՝ խառնաշխոթ երեսյթների մէջ փնտուել գտնել գլխաւոր, հիմնական, տիպական երեսյթները և տալ իրեն կանոն, իսկ խոտորումներն այդ հիմնական կանոնից նկատել իրեն բացառութիւններ:

Մասնաւորելով խօսքս հայցականի վերոյիշեալ կանոնի (պ.

զեանը հոլովք համարում է լոկբառի ձև, առանց որեւէ ձեւական նշանակութիւնն», կամ «պ. Արեգեանը հոլովք համարում է լոկբառի ձև, լոկ նշին առանց պաշտօնի», այսպէս ասելով ինքը ինձ առնաւզն ծիծաղելի կդարձնէի ընթերցողներիս առաջ, որոնց նկրայացրել էի պ. Արեգեանի երկու սահմանումները հոլովի, որոնցից երեսը է, որ պ. Արեգեանը հոլովներին վերագրում է ձեւական նշանակութիւն, պաշտօն, կամ ֆունկցիա:

Իմ յօդւածում ես ասել եմ. «Եթէ հոլովները լոկ բառի ձեւեր նշանակէին, առանց նրանց հետ անկամանելի կիրակով միացած փունկցիաների» և այլն. Այսուհետեւ, շարունակելով նոյն միաբար ըացատրել ասել եմ. (պ. Արեգեանի) «առաջին բացարձութեան մէջ հոլովք ընդորշաւծ է, իրեն ժունկցիա արտայալող ձև, իրեն մի ձև, որի հետ անխպելի կերպով կապւած է նրա ֆունկցիան: Իսկ երկրորդում՝ հոլովք լոկ ձև է՝ (մէծ մասամբ) հոլովական վերջարութիւններով կազմւած... երկրորդ բացարձութեան մէջ պ. Արեգեանը, անշուշտ դիտաւորութեամբ, բաժանեամ՝ հոլովական ձեր նրա ֆունկցիան»:

Այս իմ խօսքերից անհրաժեշտօրէն հետևում է, որ ես պ. Արեգեանին վերագրել եմ հետեւալ մտքերը.

1. Պ. Արեգեանը հոլովի տակ միշտ համկանում է ձեռ ֆունկցիա (պաշտօն, նշանակութիւն) ունիցող (և ոչ չունիցող, ինչպէս ինձ վերագրում է պ. Արեգեանը).

2. Պ. Արեգեանը մի անգամ հոլովք բացարձում է իրեն այնպիսի ձև, որի հետ անխպելի կիրակով կապւած է ֆունկցիան, իսկ ուրիշ անգամ՝ նա հոլովի ֆունկցիան բաժանեամ՝ ձեւից, և հոլովք նկատում է իրեն լոկ բառի ձև:

Եւ ես ընսագատել եմ պ. Արեգեանի այս վերջին վերաբերմունքը. ապացուցել եմ, թէ չէ կարելի հոլովի ֆունկցիան ձերից բաժանել: Ես չեմ ասել, թէ «պ. Արեգեանը հոլովք համարում է լոկ բառի ձև, լոկ հնչիս, առանց որեւէ ձեւական նշանակութեան, առանց պաշտօնի», ինչպէս հաւատացնում է պ. Արեգեանը իւր ընթերցողներին և առա փաստորապէս հերքում ինձ ու յանդիմանում. այլ ես ասել եմ, թէ չէ կարելի հոլովից բաժանել նրա ֆունկցիան և հոլովի նկատել իրեն լոկ բառի ձև:

Որ ալպար է պ. Արեգեանը հոլովից բաժանեամ՝ ֆունկցիան և հոլովք նկատում է իրեն լոկ բառի ձև—դրան շատ ապացուցներ կան թէ նրա յօդւածում և թէ րրօշիւրում: Ահա մի քանից ցիտաներ, «հոլովները լինել այսինքն ամեն կարող է փոփոխել լինել ձեւով... առանց ուղղիսերը մենք բացարձել ենք իրեն անեան ձեւը... հայոց լեզուի մէջ զնյական անուններ

ինք ձեւ, որ է հինգ հոլով ունին» ևայն (յօդւած, եր. 5): «Քաշ նոլովական ձեւ կայ մի լեզվ մէջ, նոյնքան ձեւ ձևականորէն առանձին հոլով գոյութիւն ունի նոյն լեզվ մէջ» (բրօշիր, 19): Այս խօսքերից կարծեմ ամեն մարդ կեզրակացնէ, ինչպէս արել եմ և ես, թէ պ. Արեղեանը հոլովը նկատում է իբրև լոկ բառի ձեւ, առանց նրա հետ անկամաժանելի կիրապով կապւած ֆունկցիաների»: Պ. Արեղեանը շատ լաւ գիտէ, և իմ յօդւածից էլ պարզ է թէ նա գիտէ, որ հոլովը բառի ձեւ է՝ որ արաւայալում մասունք ֆունկցիա. բայց նա այս սահմանման երկու մասերը բարառում է, և հնարաւոր է համարում հոլովը ըմբռնել իբրև լոկ ապա նրա հետ կապել ֆունկցիայի հասկացողութիւնը: Այսպէս էլ վարել է իւր յօդւածում երկու անդամ. նախ երբ առում է, «Ի՞նչ է հոլով ասածը, — ևթէ ոչ հոլովելի բառերի զանազան ձևերը (Form) *), որ կազմւում են մեծ մասամբ հոլովական վերջաւորութիւններով: Այդ ձեերը ցոյց են տալիս զանազան կախման յարարելութիւններ»... (եր. 4) ևայն: Երկրորդ երբ առում է, «Զետրանութեան մէջ միայն ձեւ հետ պիտի զործ ունենայ տակերար և ձեերը կրկնելիս զործ չպիտի ունենայ այդ ձեւի կիրառութեան հետ, որ շարահիւսութեան նիւթն է» (եր. 6): Երկրորդ խօսքից տեսնում ենք, որ պ. Արեղեանը այնքան է բաժանում հոլովի մէջ ձեւ կ ֆունկցիան, որ հնարաւոր է համարում մի առարի աշակերտին ձեերը անգիր անհետ տալ՝ առանց ֆունկցիաների մասին մը. խօսք տուելու, (նրան մանկավարժորէն նպատակայարմար միջոց է—ուրիշ հարց): Իսկ առաջին խօսքից երեսում է, որ պ. Արեղեանը հոլովի ֆունկցիան ըմբռնում է իբրև վերադիր յատկութիւն հոլովի և ոչ անբաժանելի էութիւն: Այն մի երկու մասերը—ձեւ և ֆունկցիայի զարափարները՝ պատահական չէ և ոչ սխալի հետեանը, և մանրակրկիս «պեղանութիւն» չպիտի համարել իմ կողմից նրա վրայ ուշազրութիւն զարձնելը: Պ. Արեղեանը լիզու էլ գիտէ, կէտաղրութիւն էլ գիտէ, արտաքրանութիւն էլ գիտէ, և եթէ նա վերոյիշեալ խօսքը այդ կերպով է արտայայտել և ոչ թէ խօսքի երկրորդ մասը իբրև երկրորդական նախադասութիւն կապել առաջինի հետ՝ այդ արդիւնք է մասամութիւն եղանակի: Եւ ինչպէս տեսանք՝ նոյն այդ մասածողը թիւն կիրառութեան ուսումնից խստիւ բաժանելու պահանջին մէջ: Շօշակելի օրինակով ցոյց առամ հոլովի ըմբռնման առարելութիւնը ուր ու.

*.) Դնում եմ զերմաներէն բառն էլ, որպէսովի դարձեալ չմիկաց դրւիմ, թէ զուրս եմ ձգում, որովհետեւ ինձ ձեռք չէ տալի:

Արեղեանի և իմ մէջ: Եթէ մեզ երկուսիս հարց տալին, թէ ինչ հոլովներ են «Երեխայ», «Երեխային» և «Երեխայից» ձևերը մենք երկուս էլ համաձայն միմիանց՝ «Երեխայից» կիրչէնը բացառական, իսկ միւս երկու ձեւերի մէջ կտարբելուէինք. պ. Արեղեանը առաջին ձեւ կիրչէր ուղղական, երկրորդ ձեւը արական, հիմնելով լոկ նրանց ձեւերի վրայ. իսկ ես առաջինը կիրչէի ուղղական և հայցական, իսկ երկրորդը՝ արական, հիմնելով միամանակ նրանց ձեւի վունկցիսյի վրայ: Պ. Արեղեանը անշուշտ նոյնպէս գիտէ, որ «Երեխայ», «Երեխային» ունին նաև հայցականի ֆունկցիա. բայց նա ֆունկցիան և ձեւանջառանջառ է ըմբռնում, ուստի «Երեխայ», «Երեխային» նրան ներկայանում են իբրև լոկ ձեւեր—ուղղական և արական: Իսկ ես չեմ կարող անջառ բմբռնել ձեւն ու ֆունկցիան. ուստի «Երեխայ», «Երեխային» իմ ըմբռնուղութեան ներկայանում են իբրև այնպիսի բառեր, որոնց մէջ անխպելի կապւած են ֆունկցիա և ձեւ, ուստի և առում եմ «ուղղական և հայցական»: Գուցե իմ ըմբռնուղութիւնն է սփոռ, գուցէ պ. Արեղեանինը—այս ուրիշ հարց է: Իմ նպատակս էր ցոյց տալ, թէ պ. Արեղեանի ըմբռնուղութեան մէջ հոլովի ձեւը և գունկցիան անշատելի սատրովեաներ են, և նա հոլովի վերացից ֆունկցիան վերացնելով կարողանում է հոլովի ըմբռնել իբրև լոկ բառի ձեւ, որի զէմ և զրել էլ յօդւածում: «Եթէ հոլովները լոկ բառի ձեւեր լինեն, առանց նրանց հետ անկամաժանելի կիրակով միացած ֆունկցիաների...»:

Ով է այս հարցում ուրիշի միտքը այլայիւ—թողնում են զատել լինիերցողներին:

Մի ուրիշ տեղ (եր. 22) պ. Արեղեանը ինձ մեղազրում է, որ ես փոփօխել եմ նրա տառձը, և որոշ զիտաւորութեամբ լուսնեան եմ մատնել նրա խօսքից մի բառ: Ետ զրել է. «յունարէնում չկայ միը և լատիներէնի բացառականն հոլովի համապատասխան հոլովի, միը այս հոլովի պաշտօնը կատարում են այդ լոգի մէջ սեռական կամ տրական հոլովները»: Այս խօսքի իմաստը իմ յօդւածիո մէջ ես այսպէս եմ արտայայտել. «յունարէնը (ինչպէս սուսերէնը) չտնի յատուկ ձեւ բացառականի համար, իսկ այս հոլովի արտայայտաղ ֆունկցիան յունարէնում կատարում է սեռական հոլովը»: այսինքն՝ բաց եմ թողել պ. Արեղեանի «վրայ լուսներ» բառը—«և համարնալի է» ինչն: «Որովհետեւ—առում է պ. Արեղեանը—ճիշտ, ինչպէս յունարէնում, լատիներէնի մի հոլով աblativus-ի պաշտօնը վարում են երկու հոլով սեռական և արական... նոյնպէս և աշխարհաբարում զբարդի մի հայցական հոլովի պաշ-

տօնը վարում են երկու հոլով՝ ուղղական և տրական։ Հիմա՞ երէ պ. Մալխասնանը իմ զբածը ճշտութեամբ յիշէր, այն ժամանակ չէր կարող իր հերքման երկորդ հիմունքը բերել քանի որ նոյն «կիրառութեան ձեր» կարելի էր և յունարէնի համար ասել և սեռականից ու տրականից մի ablativus հանել իրեւ մի ասանձին անսեղ խառնուրդ երկու ձերի»։

Բայց այս մեղադրանքը, ինչպէս և պ. Արեգեանի ինձ վերագրած խորամանկ զիտաւորութիւնը, որի համար իրը թէ ևս խօսքը այլայլել եմ—միանդամայն անհիմ են և երկակայտական, ինչպէս յոյս ունիմ կհամոզի և ինքը պ. Արեգեանը քիչ յիշոյց նախ յիշեցնեմ, որ ես պ. Արեգեանի խօսքերը չակերտներով չեմ բերել այլ նրա զիտաւոր իմաստն եմ բերել, իմ խօսքերով, լրացնելով նաև՝ ուսւերէնի վրայ մատնանշելով), և այդ իմաստը ինչել եմ «ծանրակշիռ փաստ յօդուա իր նորամուծութեան», զգակալով նրա կարեսութիւնը։ Ուրեմն իմ ազատ պարագրագից չէ կարելի՝ ձեռականորէն՝ պահանջնել տառացի ճշտութիւնն»։

Իսկ թէ ինչու տրական հոլովը բաց եմ թողել գա ունեցել է իր կարեսոր պատճառը, որ այս է։ Պ. Արեգեանը իւր յօդւածում կողքէ կողք զրել է «միր և լատիներէնի բացառական հոլովի պաշտօնը. այնուհետեւ ասել է. «միր այս հոլովի» (այսինքն հայոց բացառական հոլովի. . . Արդ՝ ինչպէս պ. Արեգեանը շատ գիտէ՝ (տես բրօշիւր, եր. 55) լատինական բացառականը, ablativus-ը, չէ ծածկում մեր բացառականը, այլ ունի նաև մեր գործիականի և ներգոյականի փունկցիաները։ Ուրեմն «միր և լատիներէնի բացառական հոլով» խօսքի մէջ «լատիներէնի բացառականը» որ փունկցիայով պէտք է հասկանալ. երեք փունկցիայով—այդ զէպքում «միր բացառականը», որ երկու անգամ զործ է ածել այդ խօսքում պ. Արեգեանը՝ կոպիտ սխալ կլինէր նրա կողմից, անմտան հոլովները իրար հետ համեմատելով. պէտք էր ուրեմն մերցնել լատիներէնի ablativus-ը իր անձուկ էական փունկցիայով=միր բացառականին, այս գէպքում այլիս աւելորդ կլինէր ասել «միր և լատինական բացառական» (բացարելով թէ լատինական բացառականի միայն մի փունկցիան առնում ենք ի նկատ) այլ լոկ «բացառական» բառը, որ ճշգրիտ հասկացողութիւն է տալիս Այսպէս էլ վարել եմ ես, իմ պարագրագի մէջ աւելի յասակ և, կարծում եմ, աւելի ճիշտ արտայայտելով պ. Արեգեանի միաքը։

Արդ՝ լատինական բառն աբլատivus-ը=միր բացառականը, յունարէնում արտայայտում է միայն սեռական հոլովով. *) իսկ

*) Տես Կյոներъ, Учебникъ греческой грамматики, изд. 6. С. Петербургъ 1878, § 157...:

յունարէնում արական հոլովով արտայայտում է լատինական ablativus instrumentalis =միր գործիականը, և locativus-ը =միր ներգոյականը *), բայց ոչ թէ բուն ablativus-ը, այսինքն բացառականը։ Ան այս պատճառով ես զուրս եմ ձգել այդ արական հոլովը՝ իրեւ համապատասխանով «միր և լատինական բացառականին», զուրս եմ ձգել և լատինական բացառականը՝ իրեւ համապատասխանով մեր բացառականին, և պ. Արեգեանի սխալ կազմւած խօսքը հանել և զրել եմ իմ յօդւածում նրա ուղիղ իմաստը։

Բայց զարմանալին այն է, որ պ. Արեգեանը ինձ մեղադրելով, թէ իր խօսքը ճշտաւթեամբ, լիւ չեմ բերել իմ յօդւածում որոշ զիտաւորութեամբ՝ հէնց ինքը ինձ միղաղթիլու յամար, իր խօսքը ճշտաւթեամբ և լիւ մէջ չէ բերում իր հերքման մէջ։ Նա յօդւածում ասել էր. «միր և լատիներէնի բացառական հոլով... միր այս հոլովի». իսկ բրօշիւրում ասում է «ընթերցողը պարզութէ կանոնի, որ ես զրել եմ, թէ լատիներէնի բացառական, ablativus, հոլովի պաշտօնը յունարէնում կատարում են սեռական կամ արական հոլովները»։ Ո՞չ ընթերցողը պարզութէ կանոնէ, որ պ. Արեգեանը այսահեղ զուրս է ձգում միր, այսինքն հայերէնի բառը, որը նա երկու անգամ զործածել էր իր յօդւածում և որի իմաստն վրայ ես զուրս էի ձգել նրա զործածած արական բառը, և յիշում է միայն լատինական ablativus-ը։

Ընթերցողը, իմ բացառականը պարզութիւնից յետոյ, զուցի տեսնէ նաև, որ պ. Արեգեանը «միր բացառականը» զուրս է ձգել ոչ առանց պատճառի. —միր բացառականի պաշտօնը յունարէնում չին կատարում սեռական կամ արական հոլովները, ինչպէս ասել էր նա իր յօդւածում, այլ միայն սեռականը։

Ան մի աւելի փայլուն օրինակ էր, որտեղ պ. Արեգեանը իմ արամարանօրէն ճիշտ զատողութիւնը և ուղիղ միաքը՝ արամարանական մեքենայի (սիլլոգիզմի) միջով անցկացնելով՝ վերաբերել է արամարանական կապիտ սխալ (արտարգի) և ոչ միայն հերքել է, այլ և ինձ ծաղրելի զարձրել։ Ես իմ յօդւածում ասել էի, թէ պ. Արեգեանը այս նախապատճենների մէջ—«Մի որորդ տեսում մի աղեկ» և «Որորդը տեսուա աղեկսին»—«աղեկ»։ Ճիշտ նա կոչում է ուղղական, այս բառի բուն իմաստով։ Եթէ նա ուղղական բառը հասկանում է տառացի, ստուգաբանական նշանակութեամբ՝ նա նետիւութիւնուն լինելու նամակ, նոյնպիսի բուն ստուգաբանական բառատառով պէտք է հասկանար և «արական» բառը (տալու հոլով), և այս գէպքում վերի օրինակում բերւած

*) Տես. անդ, § 161։

«աղւեսին» ձեզ և չպիտի կոչէք տրական, որովհետեւ... «աղւեսին» ոչինչ չէ տրում, ուրիշն և նու տրական չպիտի լինի՝ այս բառի բան իմաստով»:

Իմ միտքը շատ պարզ է: Ես ասում եմ, պ. Արեգեանը «աղւես» ձեզ չէ կոչում հայցական, այլ կոչում է ուղղական, «այս բառի բան իմաստով», այսինքն այն պատճառով, որ «աղւես» բառի ուղիղ սկզբանական ձեռ է: Շատ բարի, ընդունում եմ, բայց թող այդ դէպքում պ. Արեգեանը նետեսութիւնն լինի, թող նու «տրական» բան էլ հասկանայ այս բառի բան իմաստով (— առաջ նույնի). այն ժամանակ նու իրաւունք չի ունենայ վերի նախազաստթեան «աղւեսին» ձեզ տրական կոչելու: Ուրիշն իմ զատուզաթեան եղբակացութիւնն է, կամ պ. Արեգեանը «աղւեսին» ձեզ չպիտի կոչէ տրական հոլով, կամ պէտք է խստառվանի, որ ինքը անհետեսողական է (մի հոլով զործ է ածում նրա ասուցի նշանակութեամբ, մի ուրիշ հոլով՝ ստուգարանական, ասուցի նշանակութիւնից անկախ):

Պ. Արեգեանը իմ այս նկատողութեան ասիթով, (որը հերթու 4¹/₂ երես է նույնիւ) ի միջի այլոց տուում է. «անշառշա, եթէ ես տրական բառը միշտ իր բուն ստուգարանական իմաստով հատկանալի, ... «աղւեսին» ձեզ չպիտի կոչէք տրական»: Ուրիշ խօսքով՝ պ. Արեգեանը խստառվանում է, որ «տրական» բառը երրին զործ է ածում ստուգարանական իմաստով և երրին ոչ ստուգարանական իմաստով, այսինքն, իմ վերը յիշած եղբակացութիւններից ընդունում է երկրորդը՝ թէ ինքը անհետեսողական է: Հէնց այս էլ ես կամեցել էի տոել:

Սրանով էլ այս հարցը պէտք է ապառելու, բայց պ. Արեգեանը, ինչպէս ասուցի, իմ վերի գատառութիւնը՝ արամարանական ձեր վերածելով՝ նրան այսպէս է ձեռիկրպում.

«Ուղղական տերմինն է Արեգեանի կողմից ասուցի ստուգարանական նշանակութեամբ հասկացւող՝ կամ ա՞ն է ի, Հետեւարպ՝ տրական տերմինն ե՝*) Արեգեանի կողմից ասուցի ստուգարանական նշանակութեամբ հասկացւող՝ կամ ա՞ն է ի, Այս չը տուում պ. Մալխասեանը ա՞ն է ի, հետեւարպ ա՞ն է ի: Կամ տառերի տեղ անուններ գնելով՝ Տիգրանն է վարժապետ, հետեւարպ Վարդանն էլ է վարժապետ, կամ Տիգրանի ձիու գոյշ լինի»:

*) Թէ ի, այլ հետեւականութեան համար՝ «պէտք

Նը կարմիր է, հետեւարպ Տիգրանի կովի գոյնն էլ կարմիր պիտի լինի... Ան թէ ինչ անմիտ բանի վրայ է հիմնում պ. Մալխասեանը իր հետեւութիւնը և ինչպէս անգիտակցաբար մոլորւում և մոլորեցնում է իր ընթերցողներին, որոնք նրա զրածը կարդալով գուցէ կարծէին, թէ իրօք ես այդպիսի անմոտվիմն եմ ասել, թէ տրականն է ուղղական (գածը իմն է), այսինքն թէ տրականն իբրև տեսակ մտնում է ուղղական սեռի մէջ, կամ տրականը նոյն է, ինչ որ ուղղականը»:

Այսպէս ուրեմն պ. Արեգեանը արամարանական սիլոգիզմի շնորհիւ ոչ միայն հերքեց իմ դատողութիւնը (որի եզրակացութիւնը, ինչպէս տեսանք՝ ինքն ընդունել է իրօք) այլ և ինձ հըռչակեց մոլորւած, մոլորեցնող և իմ դատողութեան հիմքը՝ անմիտ: — Սիլոգիզմը, այդ Արեգատուելեան մեքենան, շատ նուրբ գործիք է և պահանջում է հմուտ մեքենավար և մեծ աշալըջութիւն. որպէսզի մաքուր, պիտանի արդիւնք արտադրէ (իմաստասիրութիւն). բաւական է մի փոքր անհմտութիւն կամ անուշադրութիւն (գիտակցական կամ անգիտակցական), և այդ մեքենան կարտազը կեղծ և անպէտք ապրանք, որ արամարանութեան դասագրքերում կոչւում է սօֆիզմ (իմաստակութիւն):

Պ. Արեգեանը ինձ ասել է տալիս այն՝ ինչ որ ես չիմ ասել, իբր թէ ես «ընդունում եմ, որ գրաբարում ներգործական բայերի սեռի խնդիրը... դրւում է տրական» (եր. 49): Այս սխալ միտքը ինձ նա վերագրում է՝ հիմնելով իմ «Գրաբարի համաձայնութիւնը» ձեռնարկի այս խօսքի վրայ, որը նա մէջ է բերում բառացի. «Կան միքանի բայեր, որոնք այժմ ներգործականի նշանակութիւն ունին, բայց խօսքի մէջ այն առարկան, որի վրայ ընկնում է նրանց գործողութիւնը, դրւում է ոչ թէ հայցական հոլով (ով), ինչպէս սպասելու էր, այլ տրական հոլովով»: Ահագին անդունդ կայ իմ այս խօսքերի և պ. Արեգեանի նըանցից հանած եզրակացութեան մէջ, ես ասել եմ «կան միքանի բայեր»: — պ. Արեգեանի մօտ սա գարձել է. «Ներգործական բայերը (այսինքն մասնակի երկոյթը ընդհանրացել է): ես ասել եմ «որոնք այժմ ներգործականի նշանակութիւն ունին». պ. Արեգեանի մօտ սա գարձել է «ներգործական բայեր» (այսինքն՝ ես այդ բայերը ներգործական եմ համարել մեր այժմ ենին ըմբռողութեամբ, իսկ գրաբարի շըջանում համարել եմ, որ նրանք իբրև ներգործական չէին ըմբռնուում. իսկ պ. Արեգեանը ինձ վերագրում է այն միտքը, թէ ես նրանց համարում եմ ի բնէ ներգործական): ես ասել եմ «ինչպէս սպասելու էր», պ. Արեգեանը անտես է արել այս խօսքը. (այսինքն՝ ես գտնում եմ, որ այդ բայերի տրական իբրն՝

կանի ձեր մեր նօրմալ ըմբռնողութիւնը, ուստի և այս ձեզ պէտք է իբրև հիմնական կանոն ընդունեի. իսկ այս տիպին հակառակ երկոյթները պէտք է նկատեն իբրև բացառութիւններ, որոնցից մի մասը դարձեալ կարելի է երկրորդական կանոնների ենթարկել, իսկ միւս մասը նկատել նրբք յատկաբանութիւն, գաւառաբանութիւն, հնաբանութիւն կամ ուղղակի սխալ գործածութիւն:

Հայցականի կրկին ձեւի գործածութեան անկերպարան վիճակը, մեր լեզւի կազմակերպութեան ներկայ անցողական շրջանում, չպէտք է առիթ լինի առանձին հայցական հոլովը ստուգաբանութիւնից դուրս ձգելու. այլ ընդհանուր գործածութիւն գտած կիրառութիւնները, իբրև հիմնական կանոն, պէտք է մացնեն հէնց ստուգաբանութեան մէջ. Գալով խոտորումներին՝ մենք պէտք է աշխատենք առանձին ուսումնասիրութիւններով նրանց բացատրել, և ես համոզած եմ, որ այս գործը ոչ միայն կարելի է, այլ և շատ ուսանելի, որովհետև մեզ համար կպարզէ մեր լեզւի կազմութեան վրայ ազդող զանազան գործօնների—անալօգիայի, ներդաշնակութեան, բարբառների և ուրիշ լեզուների—դերեն ու աստիճանները:

Աւելի ուղիղ և լեզւի ճանաչողութեան համար օգտակար են այս ուղղութեամբ ուսումնասիրութիւնները, քան հայցականի ներկայ առերևոյթս անկայուն ձեւի առաջ յուսահատարար ընկճել և այդ անկայունութեան պատճառով հայցական հոլովը հոլովերի շարքից հանել: Եւ ինչ գործնական օգուտ զրանից թէ լեզւի և թէ աշակերտի համար: Ստուգաբանութիւնից հայցականի ձեզ դուրս ձգելով ուսուցիչը կամ քերականութեան յօրինողը դարձեալ նոյն հայցականի հետ գործ պիտի ունենայ համաձայնութեան (կամ պ. Աբեղեանի խօսքով՝ շարադասութեան) մէջ, մի քանի ամիս կամ մի տարի յետոյ, և ելի նոյն տագնապը, նոյն շփոթութիւնը:

Ա8. ՄԱԼԻԽԱՍԵԱՆՑ



ՀՀ Ազգային գրադարան



6933

Գիշե կ 15 կղզ.